Հրատարակվում է չորեքշաբթի, ուրբաթ և կիւրակի օրերը։
Տարեկան գինն է 10 ռուբլի, կէս տարուանը 6 ռուբլի, 3 ամսուանը 3 ռ. և մի ամսուանը 1 ռ.։
Առանձին համարը 7 կոպէկ։

Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատանը և Կենդրոնական գրավաճառանոցում։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Ардзагангъ". կամ՝ Tiflis, Rédaction „Ardzagang."

ԱՐՁԱԳԱՆՔ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Խմբագրութիւնը բաց է ամենայն օր 10—1 ժամ (բացի կիրակի և տօնի օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ՄԻՔԱՅԵԼ ԲԱՅԱՆԴՈՒՐԵԱՆ, ՍՈՖԻԱ ԲԱՐԱՅԵԱՆ, ԱՆՆԱ ԿՈՒՍԻԿԵԱՆ և ՍՏԵՓԱՆՈՍ ԲՈՐԻՍԵԱՆՑ խորին թախծութեամբ յայտնելով՝ առաջին երեքը իւրեանց մօր, իսկ վերջինը իւր քրոջ՝

ՎԱՐՎԱՌԷ ԲԱՅԱՆԴՈՒՐԵԱՆԻ

մահը, խնդրում են ազգականներին և բարեկամներին հինգշաբթի, ա. սոյս 13-ին, շնորհ բերել հանգուցեալի յուղարկաւորութեան։ Հանգուցեալի մարմինը առաւօտեան 10 ժամին իւր սեպհական տանից, Սերգէեվսկայա փողոց համար 14, կը տանեն Մողնու Ս. Գէորգ եկեղեցին, ուր ս. պատարագ մատուցանելուց յետոյ կը յուղարկաւորուի դէպի Խօջիվանքի գերեզմանատունը։

Ամբիծքը կատարուելու է չորեքշաբթի, ամսիս 12-ին, երեկոյեան 6½ ժամին։ (1—1)

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՕՐ. ՄԱՐԻԱՄ ԱՍԼԱՄԱԶԵԱՆԻ
(ՇՐՋԱՆԱՒԱՐՏ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԿԱՆԱՆՑ ԿՈՒՐՍԵՐԻ)

Սօլօլակ, Նագօրնայա փողոց, տուն Ճամխարեանցի։

Կովկասի ուսումնարանական շրջանի պ. Հոգաբարձուի թոյլտւութեամբ, այս տարուայ սեպտեմբերի 15-ից բացուած է մասնաւոր դպրոց III-դ կարգի։

Ուսումնարանը ընդունելով երկու սեռի երեխաներ, պատրաստում է նոցա պետական միջնակարգ դպրոցները մտնելու համար։ 10—4

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայրապետական կոնդակ։
Անգլիական մամուլը և «Արձագանքը»։
Թիֆլիզի քաղաքային դպրոցները։
ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Մաղթանք Թագաւոր Կայսեր համար Ս. Էջմիածնից։ Պ. Նախարարի կարգադրութիւնը։ Պետական հողերի կապալով տալը։ Խօլերանման հիւանդութիւն։ Կարապետ աբեղան ճեմարանի տեսչի օգնական։ «Տօմար և տօնացոյց» գիրքը։ Պ. Ե. Լանգուլեանի յօդուածը։ Լոնդոնի թերթերի Թղթակիցը։ Հին լեզուների դասատուութիւնը։ Ձրի դասագրքեր Ծխական դպրոցների համար։ Նամակ Ղուբայից։ Նամակ Ալեքսանդրապոլից։ Գրագիտաց ժողովի դահլիճում։ Խնայողական գանձարանները։ Կեղծ գինիները Ռուսաստանում։ Ճափոնական պատերազմ և Կովկասի էքսպօնենտները։ Նորակոչ զինուոր Զուբիեվ։ Օր. Եղ. Տէր-Ցակ. փախցնելու դատը։ Ներսիսեան դպր. տեսչութեան Թեկնածու։ Կոմս Ցով. Դելեանեան առողջական դրութեան մասին։ Առևտրական էնցիկլօպեդիա։
ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ
ՏԱՃԿԱ-ՀԱՅԱՍՏԱՆ
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.— Տաճկախօս հռոմէական հայեր։
ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՀԵՌԱԳԻՐՆԵՐ
ՖԵԼԵՏՕՆ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԿՐՏԻՉ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍ ԻՆՆԻԼԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԵԱՅՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ։

—

Գերապատիւ Առաջնորդի Թեմին Արցախու՝ Կարապետ եպիսկոպոսի և բարեպաշտ ժողովրդոց քաղաքին Շուշուայ ողջոյն և հայրապետական օրհնութիւն նուիրեմք։

Վերադառնալով անդրէն ի վիճակն Ձեր տարջիք գործնութեան կոնդակս։ Գիտեմք զի բարեպաշտ և նահապետական ժողովուրդ քաղաքիդ ոչ սակաւ վրդովեալ է վասն խնդրոյ գպրանոցին։ Հրաւիրելով զՁեզ և զերկուս անձինս ի Հոգաբարձուաց խօսեցաք բազում ինչ ընդ Ձեզ և ընդ նոսա և ի վերջոյ ինքնին նկատելով զհանգամանս դժբախտ լրոյ, խոհական խորհրդով արժան համարեցաք զարմանել զայս խնդիր ամենայն խաղաղութեամբ։

Ուստի պատուէր տամք Ձեզ, զի և դուք իբրև հայր ժողովրդեան զնոյն ոգի խաղաղութեան 'ի գործ եդեալ, ջուն գործեսջիք բառնալ զգայթակղութիւնն ի միջոյ ժողովրդեան բանիւ քարոզութեան Ձերոյ և պահել զգպրանոցն յամենայն գայթակղութենէ, զի չէ մարթ չգալ գայթակղութեան, այլ եթէ գայցէ, սեպուհ պարտաւորութիւն է հովուական պաշտօնիդ վերահասութեամբ դատել և հատանել զձեռն գայթակղութեան. միայն թէ յիշեցուցանեմք Ձեզ, զի միշտ համերաշխ խորհրդով գործեսջիք ընդ հոգաբարձուս գպրանոցին։

Թէպէտ խոստացաք և բղձալի էր Մեզ ընդ Ձեզ գալ և այցելել քաջաց աշխարհին Արցախու և աչօք տեսանել զսիրելի ժողովուրդ մեր և խօսել բանս մխիթարականս, սակայն բազմապատիկ զբաղմունք և ամենօրեայ նորանոր հոգք յետս կասեցուցին զՄեզ։

Այլ ոչ մոռանամք զձեզ, ժողովուրդ Հայոց. թողումք այժմ ի գարնան լինել զայդ պարտիս, յորժամ Տէր յաջողեսցէ։

Օրհնելով զհովիւդ հօտիդ

ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի 4 սեպտեմբերի
Եւ ըստ տումարիս ՌՅԽԴ
Համար 1528
յՍրբազնեան Մայր Աթոռ
Ս. Էջմիածնի
Ի Վաղարշապատ։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ և «ԱՐՁԱԳԱՆՔԸ»

—

Վերջապէս «Արձագանքի» ձայնը լսելի եղաւ անգլիական մամուլին։ «Կավկազ» պաշտօնական լրագրի Կոստանդնուպօլսի Թղթակիցը գրում է հետևեալը. «Վերջերս Թիֆլիզում հրատարակուող «Արձագանք» հայ լրագիրը մի (ոչ թէ մի, այլ առաւել քան հարիւր) յօդուած հրատարակեց, որի մէջ նկարագրուած էին Տաճկաստանի հայերի կրած ճնշումները և դժբախտութիւնները։ Այդ յօդուածը առիթ տուաւ անգլիական մամուլին ուշադրութիւն դարձնել և խօսել հայերի ցաւալի դրութեան մասին Տաճկաստանում. անգլիական մամուլը միևնոյն ժամանակ մատնացոյց է անում թէ հայերի դէմ գործ դրած այդ ճնշումները որքան վնաս են հասցնում առևտրական շահերին։ Ներկայ դէպքում պէտք է ասել որ անգլիական լրագրների հաղորդած տեղեկութիւնները սխալ չեն—ասում է «Կավկազ»ի Թղթակիցը—դրա ապացոյցն է վերջին արիւնահեղ ընդհարումը, որ տեղի ունեցաւ հայերի և Թուրքերի մէջ Մուշում, ուր ուղարկուեցին քրդական զօրախմբեր հրաման ստանալով խանգարուած կարգը վերականգնելու համար ամենայն միջոց գործ դնել, չխնայելով նոյն իսկ ոչ կանանց, ոչ երեխաներին։ Քուրդերի վրայ դրած պարտաւորութեան ճիշդ կատարման վրայ հսկելու համար մինչև անգամ Կոստանդնուպօլսից ուղարկուեցին Թուրք սպաներ։

Թօղատում մի հայ սպանեց ժանդարմի սպային, որ ուզում էր նրան ձերբակալել. այդ դէպքին առիթ տուաւ ընդհանուր խառնակութեանց և բազմաթիւ բանտարկութիւնների։ Բանտերը լցուած են այն աստիճան, որ վերջերս երբ առողջապահական մասնաժողովի անդամներն այցելեցին բանտերը, հարկադրեցին տեղական վարչութիւններին բաժանել բանտարկեալներին շրջակայների վրայ և նոր, յարմարեցրած, բանտերում բնակեցնել։ Միւս կողմից անգլիական լրագրներին նայելով, պարսկական սահմաններում ապստամբող քուրդերը քարուքանդ են արել սահմանագլխի վրայի գիւղերը և այդ հանգամանքը յարել է Սուլթանի յարաբերութիւնները Պարսից Շահի հետ...

Մի քանի ժամանակ խօսում էին թէ շուտով պիտի գայ անգլիական պարլամենտի անդամներից մէկը Տաճկաստանի հայերի դրութիւնն ուսումնասիրելու և ծագած անկարգութեանց պատճառները հետազօտելու համար։»

Իսկ ինքը, Տաճկական կառավարութիւնն ինչ է անում։ Դրա պատասխանը ևս կայ Թղթակցութեան մէջ։

Տաճկական կառավարութիւնը հայաստան սպաներ է ուղարկում որ քրդերին առաջնորդեն հայերին կոտորելու, իսկ Պօլսում արգելում է մինչև անգամ սովորական, ամենայն տարի կրկնուող երեկոյթները, որին մասնակցում են եւրոպական 'պետութեան դեսպանները և ներկայացուցիչները։

«Ոչ մի ժամանակ – ասում է Թղթակիցը—Կոստանդնուպօլսում այնքան զարգացած չէ եղել լրտեսութիւնը որքան այժմ, և հաստատ յայտնի է որ նոյն իսկ էնէր, փաշայի ոստիկանութեան պետը էնկայ է հսկողութեան և նրան էլ լրտեսում էն։ Այս օրերս գաղտնի ոստիկանապետը նկատել է որ իր ետևից պտըտում է մի լրտես և բռնելով նրան ծեծել է, մինչև անգամ ատրճանակ է քաշել վրան»...

Ի հարկէ կասկած անգամ չէ կարող լինել պաշտօնական թերթի Թղթակցի խօսքերի մասին, որի գրածները բոլորովին համաձայնում են թէ մեր, թէ Կարնոյ և թէ Կոստանդնուպօլսոյ Թղթակցի ասածների հետ։

ԹԻՖԼԻԶԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐԸ

—

Թիֆլիզի քաղաքային խորհուրդը իր 1894 Թուի յունիսի 17-ի նիստին որոշեց հաստատել դպրոցական մասնաժողովի այն զեկուցումը, որ վերաբերում էր քաղաքային ուսումնարանների բարեփոխման և երեք նոր ուսումնարաններ հաստատելուն. իսկ 1893 Թուի դեկտեմբերի 30-ի նիստում որոշած էր բացուելիք երեք նոր ուսումնարանների համար 1894 ի նախահաշուի մէջ մտցնել 3600 րուբլի (սեպտ. 1-ից մինչև 1895 Թուի յունվարի 1-ը)։

Այսպիսով քաղաքային խորհուրդը վճռեց նոր ուսումնարաններ բանալ արդէն գոյութիւն ունեցող դպրոցների տիպարի համեմատ։

Այն խնդիրը պարզելու համար՝ թէ որն է եղած դպրոցների տիպը, անհրաժեշտ է դառնալ այդ ուսումնարանների պատմութեան և պարզել թէ ինչ հանգամանքներում և ինչ հիմանց վրայ են դոքա բացուել։

Քաղաքային խորհրդի 1879 Թուի մարտի 5-ի նիստին ի մէջի այլոց որոշուած էր. «Իշխ. Ա. Ի. Բարեաթինսկու յիշատակը յաւերժացնելու համար հանգուցեալի անուան նուիրել առաջին քաղաքային ուսումնարանը, որ կը բացուի Թիֆլիզում»։ Այնուհետև քաղաքային վարչութիւնը ներկայացրեց դումային, համաձայն 1879 Թուի դեկտեմբերի 31-ի որոշման, մի զեկուցում Թիֆլիզում առաջին սկզբնական ուսումնարան բանալու մասին, ուր առաջ էր բերուած դասատուութեան ծրագիրը և բացադրուած էր, թէ ուսումնարանը կը բացուի Արհեստաւորաց դպրոցին կից։ Քաղաքային խորհուրդը իր 1880 Թուի յունվարի 14 ի նիստին վճռեց հաստատել այդ զեկուցումը։

Ի կատարումն քաղաքային խորհրդի այս որոշման քաղաքագլուխը ժողովրդական դպրոցների դիրեկտորին ուղարկեց սկզբնական դպրոցի ուսումնարանական ծրագիրը և այդ դպրոցի բանալու Թոյլտւութիւնը խնդրեց։ Ժողովրդական դպրոցների դերեկտորը 1880 Թուի մարտի 5-ին հաղորդեց քաղաքագլխին, որ Կովկասի ուսումնարանական շրջանի պ. Հոգաբարձուն Թոյլատրում է Թիֆլիզում սկզբնական դպրոց բանալ այն ծրագրի համեմատ, որ ներկայացրել էր քաղաքագլուխը։ Այս ծրագրի պատճէնի վրայ հետևեալ մակագրութիւնը կայ. «Հաստատում եմ, 3-ն մարտի 1880 Թուի։ Ուսումնարանական շրջանի Հոգաբարձու Կ. Յանովսկի»։ Որդ պ. Հոգաբարձուի հաստատած այս ուսումնարանական ծրագրում ասուած է, որ ուսումնարանը կըգտնուի Միքայէլեան Արհեստաւորաց դպրոցի շինութեան մէջ, որ այնտեղ ձրիապէս ուսումն կ'առնեն արական սեռի երեխաներ 8—14 տարեկան հասակի, որ այնտեղ կ'աւանդեն՝ կրօն, ռուսաց, վրացերէն և հայերէն լեզուները (վրացոց և հայոց համար), որ դասաւանդութեան համար կը հրաւիրուին այնպիսի ուսուցիչներ, որոնք համապատասխանում են օրէնքի պահանջած պայմաններին և որ ընդհանրապէս ուսումնարանը կը ղեկավարուի այն կանոններով, որոնք հաստատուած են Կովկասի ուսումնարանական շրջանի մասնաւոր դպրոցների համար*)։

Թիֆլիզի քաղաքագլուխը աչքի առաջ ունենալով, որ սկզբնական ուսումնարաններում ուսուցիչները նշանակվում են ժողովրդական դպրոցների դիրեկտորի համաձայնութեամբ, հաղորդեց վերջինիս, որ ուսուցիչ են նշանակուած ռուսաց բաժնում—պ. Չէխօեվը, վրաց բաժնում—պ. Մէունարգեանը և հայոց բաժնում պ.պ. Թէյմուրազեանը և Գուլալեանը։

1881-ին միտք ծագեցաւ այս առաջին սկզբնական ուսումնարանի բաժինները ինքնուրոյն ուսումնարանների վերածել և դարձնել չորս նոր ուսումնարան բանալ։ Քաղաքային խորհուրդը 1881 Թուի մայիսի 29-ին հաստատեց այս խնդրին վերաբերեալ զեկուցումը։ Այս վճռի մասին քաղաքային վարչութիւնը նոյն տարուայ սեպտեմբերի 19-ին հաղորդեց ժողովրդական դպրոցների դիրեկտորին, յայտնելով, թէ ուր են գտնվում այդ ուսումնարանները և ովքեր են ուսուցիչ նշանակվում։

Ի լրումն այդ հաղորդագրութեան քաղաքագլուխը իր հոկտեմբերի 5-ին գրած Թղթով դիմում է ժողովրդական դպրոցների դիրեկտորին, որպէս զի նա հարկ եղած Թոյլտւութիւնը խնդրէ եօթը սկզբնական դպրոցների բացման մասին, որոնցից երեքը, իբրև առաջին սկզբնական ուսումնարանի բաժանմունքներ, արդէն Թոյլատրուած են պ. Հոգաբարձուից 1880 Թուի մայիսի 3-ին։ Ի պատասխանի այս գրութեան ժողովրդական դպրոցների դիրեկտորը հաղորդեց հետևեալը.

«Նորին գերազանցութիւն Կովկասի ուսումնարանական շրջանի պարոն Հոգաբարձուն, իմ միջնորդութեան համեմատ, հաճեց Թոյլատրել բանալ Թիֆլիզ քաղաքում եօթը սկզբնական ուսումնարան, որոնցից երկ-երկու ռուս և վրացի երեխաների համար և երեքը հայ երեխաների համար այն պայմանով միայն, որ հաստատելով այդ ուսումնարանները, ճշգութեամբ կատարուի 1879 Թուի յուլիսի 4-ի Բարձրագոյն հրամանը, որի հիման վրայ Թիֆլիզի քաղաքային վարչութիւնը կարող է լինել ուսումնարաններում այնպիսի անձինք նշանակել, որոնք օրէնքով իրաւունք ունին դասաւանդելու և նախօրօք ինձ հետ համաձայնութիւն կայացնելու։ Այս մասին պատիւ ունիմ հաղորդելու քաղաքային վարչութեան, առաքելով մասնաւոր դպրոցների կանոնները և սկզբնական ուսումնարանների ծրագիրը ընիկ ազգանակութեան համար»։

Նոյն նոյեմբերի 30-ին ժողովրդական դպրոցների դիրեկտորը մի այլ հաղորդագրութեան մէջ յայտնում է.

«Մասնաւոր ուսումնարանների համար սահմանած կանոնների 11-րդ յօդուածում ասուած է՝ եթէ հասարակութիւնն է բացել մասնաւոր ուսումնարանը, ապա այդ հասարակութիւնն է պարտաւոր այնպիսի անձանց յանձնել ուսումնարանի ղեկավարութիւնը, որ համապատասխանում է 11-րդ յօդուածով պայմանաւորուած պահանջներին։ Այս անձը պատասխանատու է պետական ուսումնարանական վարչութեան առաջ, որ ճշգութեամբ կը պահպանուին մասնաւոր ուսումնարանների համար սահմանած կանոնները։ Թիֆլիզի քաղաքային վարչութիւնը Թոյլտւութիւն խնդրելով եօթը ուսումնարան բանալու մասին, մատնացոյց չէ արել այն անձինքների վրայ, որոնք այդ յօդուածի համաձայն պատասխանատու պէտք է լինեն պետական ուսումնական վարչութեան առաջ։ Այս պատճառով խոնարհաբար խնդրում եմ հաղորդել ինձ թէ ովքեր են ընտրուած իբրև պատասխանատու կառավարութեան առաջ կանոնների ճշգրիտ պահպանութեան մասին։ Խոնարհաբար խնդրում եմ նոյնպէս ուղարկել ինձ նաև ուսումնարանների դասացուցակը և ապագայում ներկայացնել ինձ այդ դասացուցակները ուսումնարանական տարուայ սկզբին և երբ մէջը որևէ փոփոխութիւն է մտցնվում»։

Վերջապէս պ. Դարսկին 1880-ի դեկտեմբերի 10-ին հաղորդեց քաղաքային վարչութեանը, որ իր կողմից արգելք չէ տեսնում, որ եօթը բացուած ուսումնարաններում ուսուցիչ և ուսուցչուհի նշանակուեն պ. պ. Պապիտով, Դուլաձէ, Աստուածատրեան, Փիրումեանց, Մեսխի, Մալեցկայա և Վասիլեւա։

Վերոյիշեալից պարզ երևում է, որ այժմ գոյութիւն ունեցող քաղաքային սկզբնական ուսումնարանները բացուած են այն կանոնների հիման վրայ, որ Կովկասի մասնաւոր դպրոցների համար հաստատել է Կովկասի Փոխարքան և այն ծրագրի համեմատ, որ հաստատել է Անդրկովկասի ընիկների ուսումնարանների համար նոյն Փոխարքան 1881 Թուի յունվարի 13-ին։

Իրաւաբան Գ. [illegible]։

(Վերջը հետևեալ համարում)։

*) Այս կանոնները Կովկասի Փոխարքան հաստատել է 1879 Թուի ապրիլի 13-ին։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Կիւրակէ, ամսոյս 9-ին, Վանքի մայր եկեղեցում սուրբ պատարագից յետոյ եկեղեցական դասակարգը մաղթանք կատարեց Նորին Կայսերական Մեծութեան առողջութեան համար. միևնոյն ժամանակ մաղթելով երկար կեանք Թագուհի Կայսրուհուն, Օգոստափառ Թագաժառանգին և բոլոր արքայական տանը։ Մաղթանքին ներկայ էին բազմաթիւ աղօթողներ և Ներսիսեան դպրոցի սաները։

Նոյն օրը մաղթանք կատարուեց զօրականաց մայր եկեղեցում և Թիֆլիզի բոլոր զօրանոցներում։

Քաղաքային դումայի դահլիճում կատարուած մաղթանքին ներկայ էին պ. քաղաքագլուխը, ձայնաւորները և բազմաթիւ ժողովուրդ։ Մաղթանքներ կատարուեցին նոյնպէս բոլոր միջնակարգ դպրոցներում, կաթոլիկ և բողոքական եկեղեցիներում, Սիոնի ու Ձիթ մահմեդականաց մզկիթներում և հրէից սինագոգներում։

***

Ս. ԷՋՄԻԱԾՆԻՑ մեզ հաղորդում են.—«Այս տարի Գէորգեան ճեմարանում նոր ընդունած աշակերտների թիւը այնքան շատացաւ, որ վարչութիւնը ստիպուած զուգընթաց դասարաններ է բացել։ Երրորդ և չորրորդ դասարաններն ունին արդէն մի մի զուգընթացներ։ Չնայելով որ հինգերորդ և վեցերորդ դասարանների աշակերտաց թիւն ևս շատ մեծ է, անհնարին եղաւ զուգընթացներ բաց անել այդ դասարանների համար, որովհետև շինութիւնը նեղ է և տարեկան բիւջէն կրճատուած։ Մինչև հոկտեմբերի 20-ը կը բացուի վարժացը։ Այս տարի առաջին անգամ երկար ժամանակներից յետոյ կը վերսկսուին ճեմարանում մարմնամարզութեան դասերը։

Նորընծայ եպիսկոպոսներից Մակար Սրբազանը շուտով կուղարկուի Շամախի, իր պաշտօնատեղին։ Գեր. Խորէն եպիսկոպոս Ստեփանէն հետամուտ է Բեսարաբիոյ Թեմակալութեան, իսկ Անանիա եպիս. Աստրախանի Թեմակալութեան, իսկ եթէ որ և է արգելք հանդիպէ, վանքի ծախսարարապետութեան։

***

ԵՐԵՒԱՆՈՒՄ և ՎԱՂԱՐՇԱՊԱՏՈՒՄ Ներքին գործոց պ. Նախարարի կար-

գաղրութեամբ տանտէրերի վրայ պարտք է դնվում ոստիկանութեանը հաղորդել նոցա տներում վէր եկած և տներից ելած բոլոր ճանապարհորդների մասին։

Այս կարգադրութիւնը տպուած է «Պրավիտելստվեննի Վեստ.» 214-րդ համարում։

* * *

Երկրագործական և պետական կալուածների նախարարութեան մէջ վերջացել է պետական հողերի գիւղացիներին կապալով տալու հարցի քննութիւնը։ Նոր մշակուած կարգերի գլխաւոր հիմքն այն է, որ պետական հողերը ոչ թէ նկատուեն իբրև արդիւնքի աղբիւր գանձարանի համար, այլ նրանք տրուին գիւղացիներին այնպիսի պայմաններով, որ կարողանան բարձրացնել գիւղական դասակարգի ընդհանուր տնտեսական դրութիւնը։

* * *

Հոկտեմբերի 9-ին և 10-ին Թիֆլիզի Միքայէլեան հիւանդանոց են բերուել երեք հիւանդ, որոնք տանջվում էին խոլերինային հիւանդութեան ջղաձգութիւնից, դրանցից երկուսը մեռան, իսկ երրորդը դեռ բժշկվում է։

* * *

Վեհափառ Հայրապետը բարեհաճել է Կարապետ աբեղայ Տէր-Մըկրտչեանին ճեմարանի տեսչի օգնական նշանակել։

* * *

Խմբագրութիւնս ստացաւ «Տօմար և տօնացոյց Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ. աշխատասիրութիւն Գիւտ քահանայի Աղանեան»։ Արդէն գրքի երկրորդ տպագրութեամբ լոյս տեսնելն ապացուցանում է որ նա որոշ չափով է գտել մեր թեմական դպրոցների և հայ եկեղեցու սպասաւորների մօտ, որոնց համար և կազմել է իր տօմարը արժ. հայր աշխատասիրողը։ Գիրքը տպագրուած է Վաղարշապատ տպարանում, կազմուած է 78 երեսից և երեք ընդարձակ աղիւսակներից։ Գինն է 50 կոպէկ։

* * *

Ներկայ համարում տպուած «Թիֆլիզի քաղաքային դպրոցներ» յօդուածը այն առանձին կարծիքն է, որ պ. Եւանգուլեանը իբրև ուսումնաբանական մասնաժողովի անդամ մատուցել է սորան և ընդհանուր հաւանութիւն գտնելով կազմելու է այն զեկուցման հիմքը, որ պէտք է քըննէ ի մօտոյ Թիֆլիզի քաղաքային խորհուրդը։

* * *

Ներկայումս գտնվում է մեր քաղաքում Լոնդոնի մի քանի թերթերի թղթակից Ջոն Բուքէր, որ ուղևորվում է Միջին Ասիա։

* * *

Գիմնազիաներում լատիներէն և յունարէն լեզուների դասաւանդութիւնը դիւրացնելու համար ենթադրուած մասնաժողովն արդէն կազմուած է Պետերբուրգում և այս օրերս կըսկսուի իր նիստերը։

* * *

ԳՐԱԳԻՏԱՑ ԺՈՂՈՎԻ ԴԱՀԼԻՃՈՒՄ

—

Կիւրակէ, ամսոյս 9 ին, քաղաքային դումայի դահլիճում կայացաւ «Հայ հրատարակիչների օժանդակող ընկերութեան» հիմնադրների ժողովի շարունակութիւնը։ Այս անգամ ժողովականներն աւելի փոքրաթիւ էին, մինչդեռ պէտք էր սպասել որ հայ գրագէտները խոյս չեն տալ այժմէն իսկ մասնակցելու ժողովին և օգնելու մշակել այն կանոնադրութիւնը, որ պէտք է ծառայի հայ գրական մշակների պաշտպանութեան։ Ուրախալի էր տեսնել որ ժողովին ներկայ էին և գեղեցիկ սեռից. վիճաբանութեանց մասնակցում էր և իշխանուհի Մ. Թումանեանը։

Այդ ժողովում երկար վիճաբանութեան առարկայ եղաւ փոխառութեան խնդիրը։ Ժողովը բազմութեամբ ձայնից վճռեց փոխառութիւնները տալ առանց որևէ երաշխաւորութեան։

Վերին աստիճան անախորժ տպաւորութիւն է անում մի երևոյթ, որ դրա կանութեան մէջ արդէն մասամբ արմատախիլ է եղած, իսկ մեր ժողովներում երբեմն ցոյց է տալիս իր ականջները։ Այդ այն վայրենի սովորութիւնն է՝ խօսակցութեան առարկայ շինել «մարդկանց պատուաւորութիւնը»։ Մի կատարեալ ոստիկանական յամառութեամբ շարունակ կրկնում էին մի քանիսը «պատուաւոր և անպատիւ» խօսքերը մարդկանց վերաբերութեամբ։ Այդ հանգամանքը տեղի տուաւ մի խիստ բայց խրատական հարցման. երբ ժողովականներից մինը մի քանի անգամ կրկնեց թէ «պատուաւոր, բարոյական անդամներ պէտք լինին» և այլն, ներկայ եղողներից մէկը հարցրաւ ճառախօսին.—«դուք ձեզ ո՞ր տեսակին էք վերաբերում—պատուաւո՞ր, թէ անպատիւ»...

Պէտք է խոստովանել որ խնդիրները այդ նախապատրաստական ժողովների մէջ վճռվում են շատ արագ, առանց մանրամասն մշակման, մինչդեռ շտապելու տեղիք չկայ և պէտք է աշխատել որ կանոնադրութիւնը հնար եղածին չափ կատարեալ լինի որ յետոյ ոչ մի թիւրիմացութիւնների տեղիք չտայ։ Այդ պատճառով անհրաժեշտ է որ աւելի թուով գրական գործիչներ մասնակցեն ժողովներին... Այդ պակասութիւնը շատ զգալի է։

* * *

ՂՈՒԲԱ, 3 հոկտեմբերի.

(Թղթակցութիւն «Արձագանքի»)

—

Հետզհետէ համոզվում ենք, որ Ղուբայի թղթակիցը դատապարտուած է իր թղթակցութիւնների նիւթը վերցնել բացառապէս կամ եղանակների խստութիւնից և կամ աւազակների կեանքից, նոցա գործառնութիւններից ու ձերբակալութիւններից։ Եղանակների մասին քիչ բան ունենք գրելու. սեպտեմբեր ամսի սկզբից մեզանում արդէն սկսուած են ձմերային ցրտերը. մարդիկ շրջում են ձմերային տաք վերարկուներով և մուշտակներով, շատ տներում արդէն անընդհատ ծխում են վառարանները։ Ղուբում չեղած ընթերցողը ճիշդ գաղափար կարող է կազմել այստեղի եղանակի մասին, եթէ մէջ բերենք Պարսկաստան վերադարձող մի հաճիջուի հետևեալ ասացուածը. «մի ամբողջ տարի մնացի Ղուբում, հանացին ամառ է գալու, ամառ է գալու, բայց ես էսկի չտեսայ»։

«Արձագանքի» ընթերցողներին յայտնի է արդէն Զէյնալ-դադէ աւազակապետի սպանուելու և նորա բազմանդամ խմբի ձերբակալուելու լուրը մեր նախընթաց թղթակցութիւնից, և ահա այդ նշանաւոր դէպքից ուղիղ 15 օր յետոյ, սեպտ. 29-ի առաւօտը ձերբակալվում են նոյն եղանակով երկու աւազակներ ևս, որոնք աւելի կատաղի և աւելի բարբարոս մարդասպաններ էին ճանաչուած Ղուբայի շրջակայքում, քան նախկին ձերբակալուածները։ Սոքա են՝ Քեօռ Սալման և Օրուջը. սրանցից առաջինը յայտնի է ամբողջ Ղուբու գաւառում «Ատամ հանող» մականունով, որ աւելի սարսափ է ազդում լսողներին, քան նորա սուրն ու հրացանը, և ահա թէ ինչու. Քեօռ Սալմանը (կոյր Սալման—մի աչքը կուրացած է) առաջ լինում է դալլաք (սափրիչ), որի մասնագիտութիւնը կայանում էր անառողջ ատամներ քաշելում. և նա այդ արհեստի մէջ հետզհետէ վարժուելով և փորձուելով մի այնպիսի անսահման սէր և համակրութիւն է զգում իւր մէջ դէպի իւր այս ատամնահանական մասնագիտութիւնը, որ երբ դիմում են նորան անառողջ ատամը հանելու, նա իւր զուարճութեան համար աշխատում է հիւանդ ատամի հարևան առողջներն էլ հանել, և այդպիսով կարճ միջոցում հեռացնելով իրանից իւր բոլոր «պացիենտներին», ստիպվում է հետևելու իւր ցեղակիցների օրինակին՝ հեշտ միջոցով ապրելու—աւազակութիւն անելու. սակայն այս դէպքում չի մոռանում վերցնել իւր հետ իւր անբաժան զուարճութեան ընկերը, սիրելի աքցանը (քալփաթին), որ միշտ կախած ունէր իւր արծաթապատ գոտիից մինչև ձերբակալուելու օրը։ Առողջ ատամներ հանելը նախկին դալլաքին արդէն բաւականին պատրաստել էր ապագայում ամենախստասիրտ աւազակներից մէկը դառնալու. և նա ամենակատաղին և անգութն եղաւ իւր բոլոր ընկերների մէջ. Նորա համար մարդու գլուխը ոչնչով չէր տարբերվում հաւի գլխից. մորթել անմեղ մարդկանց, գանահարել անպիտաբար, կողոպտել, այրել, կործանել՝ սովորական զուարճութիւններ էին նորա համար, աքցանի գործադրութիւնը միայն սրբութեամբ պահում էր աւելի բացառիկ դէպքերի համար։ Այսպէս օրինակ, երբ ռանչպարներից մէկը իւր դաչաղներով շատ համառ է լինում սորան բանելու՝ Քեօռ Սալմանը ինքը յաջողեցնում է ուրեադնիկին որոգայթի մէջ գցել մի թաւ անտառում և բանելով նորան ու անասունի պէս բառաչացնելով մէկիկ-մէկիկ քաշում է նորա 32 ատամները, և պատուիրում, որ ամենքին ցոյց տալով իր անատամ բերանը և զգուշացնի ասելով՝ որ իւրաքանչիւր նրան հետամուտ լինողին սպասում է նոյն վիճակը։ Ահա այս մարդկերպ գազանն է ամսոյս 29 ին ձերբակալուած աւազակը, որ արդէն իւր 50 տարեկան հասակում մի քանի անգամ յաջողեցրել է Սիբիրից և տեղական բանտերից փախուստ տալ։ Սորա ընկեր Օրուջը տեսնելով, որ ներկայ գաւառապետ պ. Եազըկովը արած խելացի կարգադրութեամբ ոչ մի աւազակ չի կարող այլ ևս յարատևել Ղուբայի գաւառում, մտադրվում է անցնել Շամախու գաւառը, ուր ներկայումս աւազակներն աւելի ապահով վիճակ և առատ հունձ ունին, ի դէպ. աչքոտիւն և հիասթափումն է տիրում մարդուս, երբ համեմատում է Ղուբայի գաւառը Շամախու հետ. մինչդեռ այստեղ աւազակութիւնները վերջանալու վրայ են, այնտեղ ընդհակառակը դեռ նոր բորբոքում և աւելի մեծ ծաւալ է ստանում։ Ի՞նչ կը լինէր արդեօք Շամախու ժողովրդեան և տեղական վարչութեան հալը, եթէ բնութիւնը Շամախու աւազակներին ևս մատակարարէր այն բազմաթիւ և բազմակողմանի նպաստաւոր պայմանները, որ ունեին այստեղի աւազակները... Այսպէս ուրեմն Օրուջը մտադրվում է անցնել Շամախու գաւառը, որին ընկերանալու համաձայնութիւն է տալիս նա և Քեօռ-Սալմանը. բայց նախ քան Ղուբայի սահմանն անցնելը, նրանք կամենում են փոքր ինչ հանգստանալ և կազդուրուել, ուստի հինգ գիշեր շարունակ գալիս են Զիգ գիւղը (քաղաքից 6 վերստ հեռաւորութեամբ) Բախըշ Ալի անունով թուրքի տունը, որ հինգերորդ գիշերը յայտնելով գիւղացիներին՝ շրջապատում են տունը և դռները ամրացնում դրսից. աւազակները ներսից սկսում են հրացանաձգութիւն, որ շարունակվում է մինչև վաղ առաւօտ, երբ գաւառապետը իւր մարդկանցով վրայ հասնելով ստիպում է անձնատուր լինել, հակառակ դէպքում սպառնալով հրդեհել տունը. աւազակներն զգալով իրանց անել դրութիւնը՝ հրացանները ձգում անձնատուր են լինում, որից յետոյ կապերով կաշկանդուելով՝ բերվում են քաղաք և բանտարկվում իրանց ընկերակիցների մօտ։ Սրանով համարեա վերջանում է աւազակային խմբերի գոյութիւնը Ղուբայի գաւառում. մնում են միայն երկու նշանաւոր լէզգի աւազակներ Ղուբայից դուրս, որոնք հազիւ թէ համարձակուեն սորա սահմանից ներս մտնել, այսպէս ուրեմն կարելի է ասել Ղուբան բոլորովին մաքրուեց աւազակներից և հազիւ թէ երբ և իցէ կարողանան կրկին բնակուել այստեղ այնպիսի ստուար աւազակային խմբեր, որպիսիք շարունակ երևում էին այս վերջին տարիներում. և այդ շատ բնական է երևում մեզ. քանի որ այն բազմաթիւ գիւղերի ներկայացուցիչները, որոնք ինքնաբերաբար աջակցել են պ. գաւառապետին աւազակներին ոչնչացնելու գործում, հէնց իրանց կաշիից վախենալով՝ ամեն ճիգ թափելու են արգելք լինել նորանց երևան գալուն։

Բացի յիշեալ երկու աւազակների ձերբակալումից՝ մի քանի օր առաջ քաղաքիս արևմտեան կողմը, մի քանի վերստ հեռաւորութեան վրայ, անտառի մէջ գտնուել են երկու սպանուած մարդու դիակներ, որոնցից մէկի գլուխը մարմնից բաժանած, անհետացրած լինելով՝ անհնարին է դառնում նրա ով լինելը ճանաչել, իսկ միւսի թիկունքի վրայ նշմարելի են դեռ բանկայի և ածելու թարմ հետքեր (այստեղ սովորութիւն է հիւանդից արիւն առնել բանկայի և ածելու միջոցաւ), որից եզրակացնում են, որ դա պիտի հիւանդացած աւազակ լինէր, որ չկարողանալով սպասել իւր կատարեալ ապաքինութեան՝ ելել և այդ վիճակին է արժանացել. Առհասարակ ենթադրում են որ սոքա ևս աւազակներ պէտք է լինին, որովհետև գաւառից ժողոված տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ ոչ մի տեղից անհետացած մարդ չկայ։

Ի պատիւ գաւառապետի Ղուբայի հասարակութեան ունևոր դասը սեպտեմբերի 25 ին մի փառաւոր ճաշ տուեց նորան քաղաքային ժողովարանում, ուր հրաւիրուած էին նաև բոլոր այն կամաւոր հետախոյզները, որ մասնակցել և աջակցել էին գաւառապետին սեպտեմբերի 13-ի բռնած աւազակային խմբի ձերբակալմանը։

Թափառական։

* * *

Ռուսաց սինօդի դպրոցական խորհուրդը դեռ յուլիս ամսին վճիռ է կայացրել զանազան վ է ճ ա կ ն ե ր ի ծ խ ա կ ա ն դ պ ր ո ց ն ե ր ի ն ուղարկել ձրիաբար 1,602,000 օրինակ դասագիրք, որոնք իր հրատարակութեամբ են լոյս տեսել։ Օգոստոս և սեպտեմբեր ամիսների ընթացքում դպրոցական խորհրդի գրքերի պահեստը ուղարկել է 750,000 օր. այդ ձրի գրքերից, բացի 80,000 օրինակից, որ նա ուղարկել է զանազան վիճակային խորհուրդների և ժողովրդական դպրոցների տեսուչների պահանջով, որոնք նախապատրաստվում են այլ հրատարակութիւնները իւրենց էժանութեան համար։

Այժմ դպրոցական խորհուրդը մտադիր է գաւառներում նոյնպէս բանալ իր պահեստի բաժանմունքները։

Արդեօք էջմիածնի տպարանը չէր կարող նոյն ծառայութիւնը մատուցանել հայոց դպրոցներին։

* * *

ԱԽԱԼՑԽԱ, 7 հոկտեմբերի.

(Թղթակցութիւն «Արձագանքի»)

—

Քաղաքիս «ազատամիտ» կոչուած դասակարգը մեծ ճգնաժամի մէջ է. Երկու օր է ժողով ժողովի յետևից, խորհուրդ խորհրդի յետևից նիստեր է կազմում։

Գիտէք, ընթերցող, ճգնաժամի պատճառն ինչ է. Անցեալ տարի օգոստոսին մեզ ախալցխացիներիս բաղդաւորացրեց իւր այցելութեամբ Ալթճեան ազգանունով Արսէն աբեղան։ Չգիտեմ ինչ մի չնչին պատճառաւ այս ազատամիտ րաբունին հեռագրեց այն ժամանակ կաթուղիկոսական տեղապահ Երեմիա սրբազանին տեղւոյս հոգևոր կառավարութեան քարտուղար Վահան Նազարեանցի մասին և հեռատես սրբազանը առանց աջ և ահեակ նայելու հրաժարեցրեց նորան անմիջապէս իւր պաշտօնից։ Բայց աչքով տեսնում ենք, որ ամեն տեսակ, մեծ և փոքր յանցաւորները օրէնքի հիման վերայ առանց մանրամասն քննութեան, առանց դատարանական վճռի՝ պատժի չեն ենթարկուում։ Միայն մեր խեղճ քարտուղար Նազարեանն էր, որ առանց իրեն իմացնելու անգամ հեռացնելու պատճառը՝ հրաժարեցրին՝ թողնելով նորան առանց մի կտոր հացի շարունակ 14 ամիս։ Երևի այս նորա անխոնջ աշխատութեան ու յառաջադիմութեան վարձատրութիւնն էր՝ յուրախութիւն Նազարեանցի հակառակորդ «ազատամիտների», որոնք այդ առիթով թըմբուկ էին ածում։ Վեհափառ Հայրապետը լսելով Նազարեանցի արդարացի բողոքը և տեղեկանալով նորա անմեղութեան մասին՝ հրաման արձակեց անմիջապէս հրաւիրել Նազարեանցին և յանձնել նորան իւր նախկին քարտուղարութեան պաշտօնը։ Արի տես, ընթերցող, որ Վեհափառի հայրախնամ կարգադրութիւնը հաճելի չէ մեր պ. պ. ազատամիտներին։ Ահա նոցա ճգնաժամը, ահա նոցա ժողովների պատճառը։ Երկար ու բարակ խորհրդածելուց վերջ՝ որոշել են խընդրագիր կազմել, պատգամաւոր ուղարկել ս. Էջմիածին, որ Վեհափառ Հայրապետը փոխէ իւր հայրական տնօրէնութիւնը նորից հեռացնելով Նազարեանցին իւր պաշտօնից։ Ի՞նչ է պատճառը, որ մեր «ազատամիտները» ամենատոր միջոցներով՝ հալածում են պ. Նազարեանցին։ Պատճառն այն է, որ պ. Նազարեանցը գաղափարական մարդ է, ունի շնորհք իւր պաշտօնի մէջ, նա շատ լաւ քարտուղար է, գրաբառ լեզուի մէջ հմուտ անձնաւորութիւն և, չափազանցութիւն չհամարուի, հազուագիւտ հայ գիւանատանց ծառայողների մէջ և... մաքառում է «ազատամիտների» դէմ...

Հ—յ։

* * *

ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԳԱՆՁԱՐԱՆՆԵՐԸ

—

Առաջին անգամ երբ պետական բանկի և նրա բաժինների կից բացուեցին խնայողական գանձարանները, շատերը կասկածով էին նայում դրանց ապագայի վրայ և մինչև անգամ երկիւղ էին յայտնում որ կառավարութիւնը վնաս կանէ չկարողանալով այնքան գումար գրաւել խնայողական գանձարանի համար, որ նրանց շրջանառութիւնից ստացուած շահը ծածկէ յատուկ այդ գործի համար վարձուած ծառայողների վրայ եղած ծախքը։ Բայց երկչոտ ենթադրութիւնների հակառակ խնայողական գանձարաններն այնպիսի կերպարանք և այնպիսի ընդարձակ ծաւալ ստացան ամբողջ պետութեան մէջ որ մինչև անգամ նըրանց ահագին գումարների շրջանառութիւնն սկսեց ազդել պետական բանկի դրամական այլ գործառնութիւնների վրայ։ Առ 1-ն յուլիսի 1894 թուի երկու մայրաքաղաքների խնայողական գանձարաններում, որոնք 37 բաժանմունք ունէին, ժողովուած աւանդների գումարը 36 միլիոն րուբլուց աւելի էր. բացի դրանից պետական բանկի բաժանմունքներին, գանձարաններին, մաքսատներին և քաղաքային խորհուրդներին կից կային 732 գանձարաններ, որոնց աւանդն էր $246^1/_2$ միլիոն ռուբլի, փոստ-հեռագրատան գրասենեակներին կից գտնվում էին 2276 գանձարաններ 33 միլիոն ռուբլու աւանդով։ Այդպիսով բոլոր խնայողական գանձարաններին յանձնուած աւանդները հասնում են 315,801,174 ռբ. գումարի, որ յանձնուած են 1,541,746 տետրակներով։

Թէև խնայողական գանձարանի նպատակն էր բուն աղքատ և գործաւոր դասակարգին միջոց տալ խնայելու իր աշխատանքի մի մասը, բայց նա ընդարձակեց իր շրջանը և սկսեց ընդունել ոչ միայն մասնաւոր անձանց խնայողութիւններ, այլ և գիւղական, համայնական հասարակական գումարներ, որոնք պետական գանձարանում երկար ժամանակ մնում էին ընկած առանց որ և է շարժման և տոկոսի։ Այժմ մասնաւոր և հասարակական խնայողութեան գումարի թուանշանը հասնում է 300 միլիոնի—մի թիւ, որ առաջ անհաւատալի կ'երևար, բայց որ այժմ փաստ է դարձած։

«Արձագանքի» անցեալ համարներում մեր մի առաջարկութիւնը, ինչպէս յուսացինք, համակրութիւն է գտել մի քանի պարոնների շրջանում և նրանք սկսել են յորդորել և բացատրել Թիֆլիսաբնակ հայ պանդուխտ մշակներին ազատուել «փողանոցների» ձեռից և իրենց խնայողութիւնները յանձնել խնայողական գանձարաններին։ Այդ ի հարկէ գործի սկիզբն է և մինչև առաջին շահերն ստանալը մշակը դեռ կասկածով կընայի իրեն անծանօթ գանձարանին և յետոյ արդէն ինքը կըտանի առանց առաջնորդի տեղ հասցնել իր խնայողութիւնները։ Բայց չպէտք է միայն բաւականանալ Թիֆլիզում բնակուող մշակներին խնայողական գանձարանը ցոյց տալովը. Նոյն տեսակ Ղարադաղցի (Պարսկաստան) մշակներ հարիւրներով և հազարներով գտնվում են Բագւում, Գանձակում, Նուխում և Շուշում և մեր երասարդների վրայ սրբազան պարտք կայ նրանց ևս հասկացնել որ 10—20 և աւելի % խոստացող խանութպանի և չարչու մօտ կըկորչին նրանց քրտինքի արդիւնքը, բայց խնայողական գանձարանում ապահով կը մնայ։

* * *

Ո՞վ կարող էր կարծել թէ Ճափոնական պատերազմը կարող է արգելք լինել որ ռուս և կովկասեան էքսպօնենտներն ստանան իրենց մըրցանակները Չիկագոյի անցեալ ցուցահանդէսից։ Այժմ յայտնվում է որ ցուցահանդէսի վարչութիւնը մրցանակների համար մագաղաթը պատուիրել է Ճափոնիայում և որովհետև այժմ պատերազմի պատճառով առևտրական յարաբերութիւնները դադարուած են, ուստի էքսպօնենտները շուտով դեռ չեն ստանալ իրենց մրցանակները։

* * *

«Նովոյէ Օբօզ.»-ում կարդում ենք.—«Մի պարոն, Զուբիէվ, անցեալ զինուորականին ներկայացել է վիճակահանութեան և հանելով փոքրիկ № զինուոր է տարուել. Քիչ անցնելուց յետոյ դրան հասկացրել են որ միամօր որդիք առաջին աստիճանի արտօնութիւն ունին և ազատ են մնում զինուորագրութիւնից։ Զուբիէվն իր կնոջ և ծերունի մօր միակ կերակրողը լինելով այդ մասին յայտնում է իր իշխանութեան, որ նրանից պահանջում է պատշաճաւոր փաստաթղթեր ներկայացնել։ Զուբիէվի զոքանչ տիկին Նազիրեանցը դիմում է Հալաբարի Սուրբ Խաչ եկեղեցու քահանային, ուր մկրտուել է իր փեսան և խնդրում է վկայական տալ։ Քահանան վկայականը գրում է Մամաջանեանցի անունով, և Նազիրեանն այդ վկայականը տալիս է Զուբիէվին, որ անզգուշ լինելով ներկայացնում է իր իշխանութեան իբրև պահանջուած փաստաթուղթ. Իշխանութիւնը այդ արարքի մէջ նկատում է կեղծիք (подлогъ) և դատի է ենթարկում Զուբիէվին և նրա զոքանչին։ Դատարանը դրանց մեղապարտ ճանաչելով դատապարտում երկուսին ևս 3 ամսուա բանտարկութեան և վճռում է քահանայի գործողութեան մասին գործը յանձնել պրօկուրորին և միևնոյն ժամանակ հաղորդել ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին»։

* * *

Հոկտեմբերի 8 ին Գորիում Թիֆլիզի նահանգական դատարանի ժամանակաւոր բաժնում քննվում էր հայազգի մանկահասակ Եղիազար Տէր-Յովսէփեանին փախցնելու գործը։ «Արձագանքի» անցեալ համարներում մենք արդէն հաղորդել ենք գործի էութիւնը։ Դատարանը յանցաւոր գտնելով իշխան Ամիլախվարին, ազնուական Գարսեվանովին և գեղջուկ Խաչ Խպալովին, որ դրանք ցանկացել են փախցնել օրիորդ Տէր-Յակովբեանին և այդ կերպով վնասեն նրա պատուին, վճռեց դատապարտել բանտարկութեան. — իշխան Ամիլախվարին 3 ամսով, Գարսեվանովին 2 շաբթով և Խպալովին 2 ամսով։

* * *

«Նովի Օբօզր.» հաղորդում է որ Ներսիսեան դպրանոցի նոր հոգաբարձութիւնը շուտով կը կայացնի դպրանոցի տեսչի ընտրութիւն. ռուս լրագիրը լսել է որ թեկնածու է տեղակալական շրջանի ժամանակ Էջմիածնայ ճեմարանի տեսչի օգնականութեան պաշտօն վարող պ. Սագատելովը։

* * *

Ժողովրդական լուսաւորութեան նախարար կոմս Յովհաննէս Դելեանովի առողջութեան մասին հոկտեմբերի 4 ից առաւօտեան ժամը տասից հրատարակուած և մայրաքաղաքի լրագրներում տպագրուած է հետևեալ բիւլէտէնը.—«Կարմիր քամին տիրում է երեսի մի մասին և գլխի գրեթէ ամբողջ մակերևոյթին. զարկերակը 180, ջերմութեան աստիճանը տատանվում է 38,7 ի և 37,6-ի մէջև. Ուժերի անկումն չափաւոր է»։ Ստորագրել են բժիշկներ—Լէյդեն Լէսինգ և Ե. Հէյնրիխսէն։ Կոմս Յովհաննէս Դելեանովը հիւանդացել է դեռ կիւրակէ օրը, այդ նոյն օրը հեռագիր է ուղարկել իւր օգնականին՝ իշխան Վօլկօնսկուն, Փարիզ։ Հոկտեմբերի չորսին հիւանդի մօտ բժիշկները եղել են երեք անգամ. Պ. Նախարարի առողջութիւնն իմանալու համար այդ օրը այցելել են 200 ից աւելի բարձրաստիճան անձինք, ի թիւս որոց զինուորական նախարար պ. Վաննովսկին, ելևմտից նախարար պ. Վիտտէն, Պետերբուրգի ուսումնարանական շրջանի հոգաբարձու պ. Կապնիստը և նրա օգնական պ. Լավրենտիևը։

* * *

«Նովոյէ Վրէմեան» իր ընթերցողներին ծանօթացնում է այն «առևտրական էնցիկլօպեդիայի» հետ, որի իմանալը պէտք է պարտաւորիչ լինի ելևմտից նախարարութեան աստիճանաւորների համար։ Լրագիրը յիշում է այդ «գիտութեան» մասնաւանդ այն պատճառով որ նա բացատրուած է «առևտրական այլ գիտնաբերական իրաւունքներին վերաբերեալ սահմանադրութիւն» անուանուած օրէնսգրքերի մէջ, որի բարեփոխութիւնն այժմ խիստ շատ անհանգստութիւն է պատճառում ռուս վաճառականներին։

Այդ գիրքն իրեն առաջնորդ առնելով — ասում է լրագիրը ծաղրելով — կարելի է գիտութեան ամեն ճիւղերին վերաբերեալ հարցերի պատասխան տալ, օրինակ՝

ՊԵՏԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԻ ԳԻՏՈՒԹԻՒՆ

—Ռուսաստանում գոյութիւն ունի՞ արդեօք անձնական իրաւունքների և արտօնութեան վաճառք։

—Այո, գոյութիւն ունի։

—Ո՞րտեղ է ծախվում այդ ապրանքը։

—Բոլոր գանձարաններում։

—Քանի՞ տեսակ է այդ ապրանքը։

—Երկու.—առաջին—գիլդիական և երկրորդ—գիլդիական իրաւունքներ և արտօնութիւններ։ Այդ իրաւունքների

համար պիտոյ է վճարել ամեն տարի, ապա թէ ոչ կը զրկուեն իրաւունքներից և արտօնութիւններից։

ՓԻԶԻՕԼՕԳԻԱՅԻ ԳԻՏՈՒԹԻՒՆ

— Ի՞նչ հասակից սկսած մարդս չափահաս է համարվում։

— Եթէ մարդ աշխատում է արհեստանոցում կամ գործարանում, այն ժամանակ նա, ինչպէս երևում է օրինական գրքի 6 րդ յօդուածի ծանօթութիւնից, չափահաս է դառնում 15 տարեկան հասակից, իսկ եթէ մարդս ծառայում է խանութում այն ժամանակ նրա կազմուածքի զարգացումը դանդաղանում է և ինչպէս երևում է նոյն օրինագրքի 57 րդ յօդուածից նա չափահաս է դառնում 2 տարով աւելի ուշ, այսինքն 17 տարեկան հասակում։

— Այս պաշտօնական տեղեկութիւնները—աւելացնում է լրագիրը—բոլորովին հերքում են մի քանի ֆիզիօլօգների կարծիքը իբր թէ գործարանական աշխատութիւնը դանդաղացնում է օրգանիզմի աճումն։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐ

—Մեզ մօտ կան արդեօք կօմմունիստներ։

—Ռուսաստանի առաջին գիլդիական վաճառականները ամենակատաղի կօմունիստներ են։ Այդ անձինքների կարողութեան (հարստութեան) մէջ եղած զանազանութիւնը երևութական է, իսկ ճիշդ յայտնի է որ իւրաքանչիւր օր, ո՛ր ժամերում, ռուսական բոլոր առաջին գիլդիական պարոնները հաւասար բաժին են անում իրանց մէջ դրամագլուխները և աշխատանքները։ Հէնց այդ պատճառով էլ բոլոր առաջին գիլդիականներից միատեսակ հաւասար հարկ է առնվում։

—Արդեօք Մօնտէսկէօյի «իշխանութեան բաժանման տեօրիան» մեր մէջ գործադրութիւն գտնում է, թէ ոչ։

—Հարկերի օրինագրքի 45-րդ յօդուածի հիման վրայ «վարչական ատեանը» իրաւունք չունի հետաքրքրուելու թէ ինչ է կատարվում միւս «վարչական ատեանում»։ Այդ պատճառով կապալառուն որ [illegible] վարչական ատեանի հետ երկու պայմանագիր է կապել, իւրաքանչիւրը 30,000 րուբլի գումարի, պարտաւոր է ներկայացնել միայն մի վկայական [illegible], իսկ նա որ միաժամանակ 100 պայմանագիր է կապել [illegible] ատեանների հետ, ամեն մէկը 30,000 րուբլի կամ բոլորը միասին 3 միլիօն րուբլի—նա պարտաւոր է ներկայացնել միայն 2 [illegible] վկայական։

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԳԻՏՈՒԹԻՒՆ

—Առաջին գիլդի վաճառականը մի խանութի համար հարկ է տալիս 620 րուբլի. որքան պիտի վճարէ 10 խանութի համար։

—6200 րուբլի։

—Մի շտապէք, մտածեցէք, խնդիրն այնքան հասարակ չէ, որքան երևում է։

—Այո, այո, ներեցէք, ոչ թէ 6200 րուբլի, այլ 1115 րուբ., ես բոլորովին մոռացել էի որ օրինագրքի հիման վրայ առևտրականն ինչքան աւելի շատ խանութներ ունենայ, այնքան աւելի պակաս հարկ պիտի տայ իւրաքանչիւր խանութի համար»։

Պարզ չէ՞ արդեօք—ասում է «Ռուս. Վեդոմոստին», որ մեր ներկայ առևտրական հարկահանութեան սիստեմի պաշտպանները համարում են իրենց ոչ միայն «արդարութեան», այլ և «գիտութեան» պաշտպան։

***

ԿԵՂԾ ԳԻՆԻՆԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Յայտնի է թէ ինչ ահագին քանակութեամբ տարածվում են Ռուսաստանի մէջ զանազան տեսակ օղիներ—լիմիչքներ, փակուած խաբուսիկ ոսկեզօծ գեղեցիկ շշերի մէջ և կնքուած հազար ու մի խաբեբայական կնիքներով։ Դոքա ընդհանուր անունով կոչվում են պտղագինի (фруктовыя вина) և վաճառվում են իբրև օղի, պօրտվէյն, խերէս մադերա, և այլն և այլն։

Մինչդեռ մի կողմից անտեղի և անհասկանալի հարց է բարձրացրել անարատ գինին հարկի ենթարկելու, Պետերբուրգի քիմիական լաբօրատօրիան մի վերին աստիճանի խելօք և օգտակար ձեռնարկութիւն է սկսել, որ ահագին գործնական հետևանքներ է ունեցել և կարող է մեծ օգուտ բերել ազգաբնակութեան թէ առողջութեանը և թէ գրպանին։ Պետերբուրգի լաբօրատօրիան զբաղուել է Ռուսաստանում վաճառուող այդ «գինի»-ների,—մադէրների, օղիների, խերէսների և այլն քիմիական տարրալուծութեամբ։ Այդ մանրամասն, բարեխիղճ ուսումնասիրութիւնը ցոյց տուեց, որ այդպէս անուանուած խերէսները, կոնեակները և այլն խաղողի հոտն անգամ չեն լսել, այլ պատրաստվում են կարամէլից, շաքարից, մեղրից ու բաղեղի հիւթից, մի քանիսն էլ շինվում են յամիչից, գլիցերինից, գինու թթուատից և սպիրտից. երրորդ տեսակները կեղծվում են դառն նշից, նշիւղից, ընկուզի հիւթից, գլիցերինից, յամչի հիւթից, կարամէլից և սպիրտից։

Կեղծուած խնձորի և պօրտվէյնի բաղկացուցիչ մասերը երևացել են.—ալքօհօլ, մոլիբ, ծուծ, գլիցերին, թթուատներ, ծծմբաթթու, ֆոսֆորային թթուատ և այլն և այլն։

Լաբօրատօրիան ուշադրութիւն դարձնելով այսպիսի յանցաւոր կեղծիքի վրայ, յայտնում է որ այդ և այլ հոտաւէտ հիւթեր բովանդակում են իրենց մէջ մարդու կազմուածքը թունաւորող վնասակար հիւթեր, ինչպէս այդ ապացուցուած է բազմաթիւ փորձերով։ Աբսէնտի համար գործածուած ծուծը (էսէնցիա) առաջացնում է սաստիկ ջղային ցնցումներ և կաթուած։

Լիկէօրի մէջ [illegible] հոտաւէտ նիւթերը առաջացնում են փայտացումն (столбнякъ)։ Այդ պատճառով քիմիական լաբօրատօրիան նախազգուշացնում է ազգաբնակութեանը չգործածել այսպէս անուանուած պտղագինիքը (фруктовыя вина), որոնք պատրաստվում են Ռուսաստանի և գլխաւորապէս Պետերբուրգի և Մոսկվայի գործարաններում։ Նոյնպէս վնասակար են և կեղծ բոլոր ծուծերը, որոնց իսկականը պատրաստելն այնքան թանգ է որ եթէ այդ ծուծերն իսկական լինէին, նրանց գները միանգամայն անմատչելի կը լինէին նոյն իսկ միջին հարստութեան տէրերի համար։

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

*** Մինչդեռ մեր գրական ընկերութիւնը իր առաջին քայլերն է անում և դեռ շփոթութեան մէջ՝ չէ կարողանում մի որոշ անուամբ մկրտուել, աւելորդ չենք համարում «Արձագանքի» միջոցաւ ծանօթացնել նրա բազմաթիւ հիմնադիրների այն տեղեկութիւնների հետ, որոնք երևում են մայրաքաղաքի մամուլի օրգանների մէջ նոյն տեսակ ընկերութիւնների մասին։ Այդ տեղեկութիւնները մանաւանդ այժմ աւելի անհրաժեշտ են, քանի որ հայ գրագէտների ընկերութեան կանոնադրութեան նախագիծը գտնվում է մշակուելու շրջանի մէջ և, որքան նա բազմակողմանի քննուի, մշակուի, որքան նա աւելի յարմարուի եղած ընկերութեանց փորձերին, այնքան աւելի օգտակար կարող է լինել։

«Ռուսաց գրական ընկերութիւնը» գոյութիւն ունի 1886 թուականից և առ 1 Հոկտեմբերի 1894 թուի ընկերութիւնն ունեցել է 8 [illegible] և 49 [illegible] անդամներ։

Ընկերութեան կարգադրիչ օրգանը—հաղորդում է «Նով. Վրէմեան»—եղել է ընկերութեան խորհուրդը, որի գլխաւոր խնդիրն է եղել անտեսական հարցը և շաբաթական զրոյցներ և ժողովներ կայացնելը։»

Ինչպէս տեսնում է ընթերցողը ռուս գրագէտները ութ տարի շարունակ շաբաթական ժողովներ են արել միմիայն որոշ բարոյական կապ հաստատելու միմեանց մէջ և մտքեր փոխանակելու և բան սովորելու համար. իսկ փոխադարձ օժանդակութեան խնդիրը պիտի քննուի միայն այս տարի։

«Ռուսաց գրագէտների փոխադարձ օժանդակութեան հարցի մասին միայն գլխաւոր են սկզբունքի խնդիրներ, իսկ այդ առաջարկի մանրամասն մշակումն պիտի լինի այն ժամանակ, երբ կանոնադրութեան ծրագիրը կազմուի։ Ծրագրի կազմելը յանձն է առել ընկերութեան նախագահ պ. Խասկովը և այս ամսոյս պիտի ներկայացնէ ժողովի քննութեան»։

Ընկերութիւնն այսքան ժամանակ ուսումնասիրել է եւրոպական նոյնանման ընկերութիւնների ընթացքը և գործունէութիւնը և Անտվերպէնի գրական ժողովին ուղարկել է իր ներկայացուցիչ Ջազուլեավին, որ պատրաստում է մի զեկուցումն ընկերութեան նիստերից մէկում կարդալու համար։

«Ընկերութեան գրական գործունէութիւնն այն է եղել, որ նա կայացրել է մի ամբողջ շարք զրոյցներ, որոնք տեղի էին ունենում իւրաքանչիւր շաբաթ՝ սկսած հոկտեմբերի կէսից մինչև մայիս ամիսը։ Այդ ժողովներում ընկերութեան անդամները կարդում էին չհրատարակուած վիպական և բանաստեղծական գրուածներ, զանազան զեկուցումներ էին տրվում գրականութեան և գեղարուեստական կրիտիկայի վերաբերեալ և յետոյ այդ ընթերցուածի կամ զեկուցուածի մասին ընտանեբար զրոյց էր լինում նախագահի առաջնորդութեամբ։ Այդպիսով այդ ժողովները ներկայացնում էին իբրև մի զտիչ-ֆիլտր, որի միջով անցնում էին ընկերութեան անդամների գրական աշխատութիւնները և բացի դրանից այդ աշխատութիւնների առիթով գրական հեղինակաւոր շրջանում դարձնում և մշակվում էին գրականութեան, գեղարուեստի, թատրոնի և այլն վերաբերեալ խնդիրներ»։

Թէ որքան հաստատ է եղել և է այդ ընկերութեան գործունէութիւնը, երևում է նրանից որ՝

«Բոլոր այդ զրոյցներին մասնակցում էին [illegible] գրականութեամբ զբաղուող անձինք, իսկ երբեմն ներկայ էին լինում հիւրեր, այն էլ զեկուցանողի համաձայնութեամբ»։

Ժողովների թիւը և նրա գործունէութիւնը մի առանձին պատկառանք է ներշնչում ընթերցողին։

«Ժողովներ միջին թւով եղել են տարեկան 21, այդ ընթացքում կարդացուել են 209 զեկուցումներ. բացի դրանից ընկերութիւնը կայացրել է (իբրև փորձ) երկու գրական երեկոյթներ և երկու հրապարակական դասախօսութիւններ»։

Այդ համեստ սիստեմը ցոյց է տալիս թէ ընկերութիւնը որքան մեծ ընտրութիւն է անում իր դասախօսութեանց, ընթերցման և այլ գործերի մէջ և այդպիսի խելացի գործունէութեան հետևանքն այն է որ այժմ ընկերութիւնը մտադիր է՝

«1894—95 թուին պարբերաբար բանալ իր դռները հասարակութեան առաջ, հրաւիրելով նրան որոշ վարձով և երբեմն նոյն իսկ ձրի, ներկայ լինել գրական երեկոյթներին և դասախօսութեանց»։

ՏԱՃԿԱ-ՀԱՅԱՍՏԱՆ

ԿԱՐԻՆ. Անցեալ տարուան թանկութեան պատճառաւ Երզրումի նահանգին ամէն կողմերէն ինչպէս այլուր նոյնպէս Տրապիզոն գաղթած էին ամէն ազգէ չքաւորներ։ Հիմակ որ կալի ժամանակ է, Տրապիզոնի կառավարութիւնը հրամայած է որ ետ դառնան իրենց տեղերը։ Տրապիզոնէն Պայպուրթ, ճամբուն վրայ կը հանդիպինք ասոնց խմբերուն, որոնց դէմքեր կարծես ցուրտն ու անձրևն ալ միաբանած են։

Սեպտեմբեր 1-էն 7 Հոկի լեռնէն սկսեալ ձիւն տեղաց մինչև Երզրում, 10 սանտիմէթր բարձրութեամբ։

Թաղային վարժարանները բարեկարգելու ճշմարիտ փափաք մը կայ, բայց արդիւնքը նորէն չի պատասխաներ այդ բաղձանքին։ Պատճառը դարձեալ դրամն է որ իր գէշ խաղերը կը խաղայ մեզ։

Ներկայ թաղական խորհուրդը պաշտօնի սկսած ատեն թաղային սնտուկը 500 լիրայի չափ պարտք ունէր։ Թաղական խորհուրդը իր երկու տարուան պաշտօնավարութեան մէջ 800 լիրայի չափ ծախք մը ըրաւ կալուածներու շինութեան և նորոգութեան։ Այսու հանդերձ, այնքան տնտեսագիտութեամբ յանձն առաւ իր ձեռքը գտնուած նիւթոցը որ այսօր թաղային պարտքը 150-160 լիրայի իջած է։ Միայն թէ ինքզինքը անկարող կը յայտարարէ վարժարանին համար նոր վարկ մը բանալու։

Վարչութիւնը ասոր վրայ, թաղային անտանէն յուսահատ, թոշակաւոր աշակերտները շատցնել աշխատեցաւ։ Տեղւոյս ազգային վարժարանները 1500-1600-ի չափ աշակերտ ունին։ Մինչև հիմա անոնց հազիւ 3—400-ը թոշակ կը վճարէին։ Որոշուեցաւ որ աշակերտներուն 900-ը վճարող ըլլան, ու մնացեալ 5-600-ը ձրի, և թոշակներն ալ որոշուեցան տարեկան 100 դրշ. 75 դրշ. 50 դրշ. և 25 դրուշ (Եթէ 25 դրուշ վճարող հայերը մէկէ աւելի զաւակ ունենան վարժարանը, $12^1/_2$ դրուշ պիտի վճարեն անոնց համար)։

Սեպտեմբեր 1-ին բացուեցան վարժարանները։ Աղասպալեան և Լուսաւորչեան Հրաշանգ ունէին առանց ընկալագրի աշակերտ չընդունիլ ոչ թոշակաւոր և ոչ ձրի։ Մինչև այսօր թաղական խորհուրդը 400 ձրիի և 85 թոշակաւորի ընկալագիր տուած է, ուրկէ կը հետևի թէ թոշակի նոր դրութիւնն ալ ապարդիւն պիտի մնայ. եթէ Վարչութիւնը յամառի իր որոշման վրայ, աշակերտները պիտի զրկուին վարժարանէն, որովհետև ընդհանրապէս համոզում գոյացած է թէ ծնողները աղքատութեան պատճառաւ անվճար կը թողուն որոշուած թոշակները։

Այս առթիւ, կարելի չէ հոս ալ ի գործ դնել այն դրութիւնն որ ընդունուած է ի Տրապիզոն, ուր վարժարանը աշակերտ չունեցող կարող ազգայիններն պարտաւորիչ կերպով կը վճարեն իրենց վարժարանական տուրքը։

—ԱԿՆԱՅ Կամարակապ և Ապուչեխ գիւղերուն վարժարանները փակուեր են, այդ վարժարաններուն Պոլսոյ մէջ ունեցած կալուածները երկրաշարժէն փլած ըլլալուն պատճառաւ։ Ուսուցիչները պաշտօն փնտռելու համար դիմումներ կ՚ընեն այլ և այլ տեղեր։

ՎԱՆ քաղաքին շրջակաները կատարուած պեղումները ի լոյս հաներ են անվթար արձան մը որ կը կարծուի ըլլալ շատ արժէքաւոր։ Այս արձանին գիւտը հեռագրուեր է անմիջապէս Բ. Դուռը։

ՊՈՐՏԻՋԱԿԻ հարաւ-արևմտեան կողմը մէկուկէս ժամ հեռաւորութեամբ լեռներու մէջ հաստատուած երկու հայ գիւղակ կան, մին Սագար Պուջղուն անունով, միւսն ալ Տեօշէմէ։ Բնակիչները Տրապիզոնի և շրջակայքի գաղթականներ են. ամենքն ալ կըզբաղին երկրագործութեամբ, բոլորովին նահապետական կերպով։ Սերմնացանի և փարուցանի ատեն կիները իրենց էրիկմարդերուն չափ եռանդով գործ կ՚ընեն, և մանկամարդ կիները ու երիտասարդուհիներն ամենքն առտուն կանուխ բոլոտն կը դիմեն դալարիններու և մարգագետիններու մէջ իրենց հօտերով, և ամբողջ օրը իրենց հօտերը արածելէ վերջ երեկոյին կը դառնան իրենց տուները։ Բնակարաններն միայարկ գետնի վրայ խանձարուր խրճիթներ են, որոնց ներսը ոչ արևու լոյս կը թափանցէ և ոչ մաքուր օդ, այլ մէջտեղը դրուած է թոնիրը և անոր շուրջը կը բոլորին ամենքն ալ։ Արևելեան սովորութեան համաձայն հիւրասէր մարդիկ են, և վերջին ծայր բարեպաշտ. շաբաթապահքերուն և չորեքշաբթի և ուրբաթ օրերն ալ պահեցողութիւններն երբեք չեն լուծեր, իսկ կիրակիներու չափազանց նախանձախնդիր։

Սակայն իրենց կրթական վիճակը խիստ անկեալ է։ Մատով անգամ հազիւ կարելի է գտնել երկու կամ երեք հասարակ կարդալ գիտցողներ, և սակայն ամենքն ալ կը խոստովանին թէ [illegible] (ընթերցումը) լաւ բան է։ Նորաշէն եկեղեցի մը ունին դեռ կիսկատար, որ շինուած է Յովակիմեան Տ. Ստեփաննոս սրբազանի առաջնորդութեամբ։ Եկեղեցին պատարագի վերաբերեալ ամեն զգեստեղէն և զարդեղէն նուիրած են Կլեմպշէկերտան եղբայրները։

Եկեղեցին վերնատուն մէջ կը կարդան տղայք հասարակ ընթերցում, աղօթք և շարական. իրենց վարժապետն է Կրճիկեան Յովհաննէս, Պարտիզակցի։ Գիւղացիները գոհ են իրենց վարժապետէն։ Արդ հաստատունքով կը լեցուի մարդու սիրտը վարժարանին վիճակը տեսնելով, որ հաւիր տարի առաջուան վիճակը կը պահպանէ։ Աշակերտները իրենց ձեռքն ունին միայն քերական և Ծնողաց. աւելի ուսում չի կայ դպրոցին մէջ, միայն գիր առանց հաշուի։

ԲՈՅԵՆԻ և ԸԼՏԸԿԵՐՏԻ պտուղները հաջողներն եղաւ լաւ են, բայց որովհետև շատ քիչ ցանուած են, գիններն ալ այժմ բարձր են։

Պայպուրթ ցորենի քիլէն 30-32 դրուշ է, իսկ գարին 15-16։ Երզրում ցորենի քիլէն 35-38½, գարին 18-19։ Ալիւրին մէկ լիտրը 10-11 դրուշ։ Ալաշկերտ ցորենի մէկ քիլէն 20-25 դրուշ։

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ շատ ստուար հայ ժողովուրդ մը ունի, և շատ անբաւական դպրոցներ. 2500 տուն հայ կայ, և այս թիւին դէմ կը գտնենք 750 աշակերտ, որոնք կը յաճախեն չորս դպրոց, երկուքը մանչերու և երկուքը աղջկանց։ Ըսել է երեք տունէն մօտաւորապէս 1 տղայ դպրոց կ՚երթայ։ Այս համեմատութիւնը զարհուրելի է։ Գաւառական ընտանիքի մը մէջ առ նուազն 3-4 տղայ կը գտնուի։ Ըսել է 10-12 տղաքներէ միայն հատ մը դպրոց կ՚երթայ։ Ո՞րքան մեծ պիտի ըլլայ անուսներու թիւը մօտաւոր ապագայի մը մէջ...

ԱՐՃԷՇ ԿԱՄ ԱԿԱՆՑ

Վանայ ծովուն հիւսիսը կը գտնուի հին Արճէշ քաղաքը, որ նոր անունով կը կոչուի Ականց։ Վանայ կուսակալութեան ներքեն է, և ունի բազմաթիւ գիւղեր, մարդաշատ, հացաշատ։ Օրօրան գետը բոլորելով ծաղկաւէտ լեռներէ կուգայ կը ոռոգէ Բաբուշէն, Բերդաղ, Բլուր, Բլըրմակ, Քրկաշէն, Իրշատ, Զորդուռ և ուրիշ գիւղեր, և իր երեսուն ջրաղացքի անիւը դարձնելու չափ առատ կոհակները կը նետէ Բզնունեաց ծովակը։ Յարութիւն գիւղի մէջ է Ոսպնակեր Յ. Աստուածաբանի սև քարէ կիսակամար շիրիմը. իսկ դաշտին մէջ կան երեք փառաւոր դամբարաններ, եպիսկոպոսական նշաններով զարդարուն, գետնի երեսէն չորս կանգուն բարձր։

Հողագործութիւնը այս երկրին մէջ աւելի զարգացնելու նպատակաւ, վանցի և բաղիշեցի քանի մը դրամատէրներ յիշեալ գիւղերու մէջ մշակած են այգի, բարտենի, որ յայնքան շահաւոր է շինուածներու համար։ Թէպէտ հողը կակուղ և զօրաւոր է, սակայն գիւղացիք տակաւին չեն ուսումնասիրած իրենց հողերու բնոյթն ու արգասաւորութիւնը, ու պապենական սովորած եղանակներով կը մշակեն հողը, ուր միայն կը սերմանեն ցորեն և գարի, թէև հողը ընդունակ է ամեն տեսակ արմտիքներու։

Առօրդութեան և սերմնահանութեան նոր դրութիւն մը բաւական տարիներէ հետէ ընդունուած է և կը գործածուի մանաւանդ ոստին (անջրդի) տեղերը։ Այս նոր դրութեան շնորհիւ, ակօսները միօրինակ կը բացուին առուներու պէս, ցորենահատիկները կարգաւ կը սերմանուին ակօսներու մէջ, որով հատիկ մը կորուստ չերթար, և հնձելու ատենն ալ մեծ դիւրութիւն կ՚ընծայեն սարահուանդներուն։ Այս դրութիւնը [illegible] կը կոչուի։ Տիր եղած արտերը կը հնձեն խոշոր, կլոր ու կեռ մանգաղով, [illegible], որուն մէկն մի հունձը մէկմէկ խուրձ կը կազմէ։

Գիւղացիներն ընդհանրապէս գեղեցիկ են, անուս և յամառ, սակայն ժիր աշխատողներ են, հողով ու մարմնով կապուած իրենց դաշտերուն, այնչափ ամուր կապուած, որ հազարէն մէկի մըտքէն չանցնիր թողուլ իր արտ ու ափը ու պանդխտիլ օտար երկիրներ։

Իրենց բարեպաշտութիւնը յատկանշանական է։ Ժամ ու պատարագը տէրտէրոջ կը թողուն, զոր լաւ կը վարձատրեն, և իրենք դաշտերու մէջ կը մըրմնջեն իրենց աղօթքը։ Ձեռ ատեն կը րօնասէր կը դառնան. այսպէս են գրեթէ բոլոր գիւղացիները։ Տարին մէկ անգամ ուխտ կերթան աւանդական սովորութեամբ, զուռնա ու զարդարուն, իրենց ամենէն մօտ գտնուած վանքին, Մեծոփին, և այն Վարագայ Խաչին։

Վանի շրջակայ գիւղացիներու պէս երկրպագու չեն քաղքըցիներուն, ընդհակառակն կ՚արհամարեն և ճիշդ կը վարուին անոնց հետ այնպէս ինչպէս քաղքըցին իր շինականին հետ։ Չեն սովորիր իրենց ապրանքը—հացը—ուրիշին վաճառելու համար։ Խորխ ու զուռդ են. իրենց վրէժխնդրութեան բոցը կը մարեն [illegible] «Աստուծոյ ատեանն սկսեալ մինչև մեռելի տուրը» (առաջնորդ) իրենց [illegible] կը պահեն։ Իրենց ցորենը պարարի կամ ոսկոսի տեղ չեն տար։

Արճէշն ունի եկեղեցի մը սուրբ Գէորգ անունով, անուանի [illegible] կոչուած մարմարեայ տեսակ մի դեղ վէրք բժշկելու հրաշքով։ [illegible] կը դիմեն հոս ու կը բժշկուին իրենց անխախտ հաւատքով։ Տան մը մէջ երբ մանուկներն անդրդուելութեամբ թանկագին իրեղէն մը կոտրեն, երբ անդութ ձեռք մը ծառատունկին դալար նորահաս ճիւղ մը կտրէ, կամ անուղիղ վրիժառութեան ոգւով նոյն տարուան նոր պատուաստուած ծառերու շիւղերը կոտրէ, ճմլկներ կամ վնասուածները սրտի մորմոքով մը կ՚անիծեն ըսելով. կոտրողի «Ականց լմլըրժայ եարէն իլնայ վէր կոտրողի ձեռքերաց»։

Սիփան լեռը Արճիշու և շրջակայ գիւղօրէից պաշտպանն է խորշակէ, ժանկէ և ցրտահանութենէ։ Կը մեղմէ օդը, կը կոտրէ փոթորիկներու ուժը, ինչպէս նա և հիւսիսի ցրտերու դառնութիւնը։

Սիփանայ հիւսիսային արևելեան մէկ թևին բարձունքէն շրջակայ ծովային ու ցամաքային համայնապատկերը որչափ աննկարագրելի գեղեցիկ է, նոյնչափ ալ պանդուխտ վանցիներուն համար տըխրաբեր ու աղէկտուր։ Արցունքներ կը լալէ աչքերէ, կսկծալի հառաչներ ալ սրտի խորքէն։ Հարաւային արևելեան հորիզոնի ծայրը, լեռնակներու ետևէն Վարագ լեռը վերջին անգամ կցուցանէ իր ամենաբարձր գագաթները, Աղթան բերդը ու Գալիլիայի լարնհրդաւոր կատարը։ Վերջին անգամ կը նշմարուին Ծառազարդ Այգեստանը, Արտամէտ աւանը, Նաւահանգիստ Ավանցը, ու անոնց մէջտեղը սևաթոյր բերդը իր ցցուած ատամներով ու աշտարակովը։ Կապուտագեղ ծովակը ալ վերջին անգամ իր ծիծաղկոտ դէմքովը կը ժպտի անբաղդ ուղևորներու արտասուաթոր աչքերուն։ Ա՛լ մնաք բարով Աղթամարայ, Լիմ ու Կտուց անապատներու խաչազարդ գմբէթներ ու տաճարներ։ Ալ մնաք բարով ծննդավայրերու գեղեցիկ ու սուրբ յիշատակներ։

Սիփանը իր սպիտակափառ գագաթով և փառայեղ մեծավայելչութեամբը բազմած է Բզնունեաց աղի ծովակին հիւսիսային եզերքը։ Իր կուրծքերու, իր կողերու, ստորոտներու վրայ սփռուած են շատ մը քաղաքներ ու գիւղեր։ Գինաւէտ Ասրափը, հացաշատ Արծկէն, հայաշատ Ալճաւազ, կաթնաջուր Սքանչելագործը Սիփանայ ստինքներէն կախուած կը ծծեն անոր անսպառ կաթն ու կենդանութիւնը։ Անոր անեզր պառեկներու վրայ, անոր դալարաւէտ կուշտերուն մէջ կ՚եռան կը զեռան հօտեր, նախիրներ, մանաւանդ աշխոյժ նժոյգներու ջոկատներ։ Հոն է ամառնային եղանակի մէջ մինչև օգոստոսի վերջերը և կլպատացի, սուրխացի ոչխարներու վաճառականը իր անհամար ոչխարներով, հոն կ՚արածէ, կը մակաղէ, ժրիապէս բնութեան խոտաւէտ գրկին մէջ, ապա սեպտեմբերին կը քշէ իր հօտը դէպ ի հեռաւոր երկիրները։

Սիփանայ կուրծքերէն, ստինքներէն կը բղխեն անհամար վտակներ, որոնք խոր ակօսելով, վիրաւորելով լերան կուսութիւնը, կը ցուցանեն իրենց մօր ներքին կմախքը, մերկութիւնը։ Ընդհէն դէպ հիւսիս կը տարածուի ընդարձակ մարմանդ մը, շրջապատուած բլրակներով, որոնք Սիփանայ թիկնապահներն են կարծես. զուլալ ու պաղորակ, առատ ու կաթնահամ վտակներ ու աղբիւրներ ցանցի մը պէս սփռուած են մարգագետնի երեսին վրայ, որոնց եզերքները կը լայնանան ուլն ու մաքին, քուրդ հովիւներու արթուն հսկողութեան ու սրինգի ներդաշնակութեան տակ։

Կարավանը իր բեռնակիր գրաստներուն կուշտ ու կուռ յագուրդ տալու համար երկու օր դադար կառնէ այս դրախտանման վայրերուն մէջ. արդարև կ՚արժէ օրերով վայելել այս անմահական ջուրերը, այս եդեմային վայրերը։ Չորս քրդաբնակ գիւղեր բաժնած մը կը կազմեն, այս սիրուն դաշտավայրը եզերող լեռնակներու ստորոտներու վրայ երկաբորէն բազմելով։ Այս գեղեցիկ դալարադեղ դաշտը կը կոչուի Սարի-Սու։

[illegible]

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏՕՃԿԱԽՕՍ ՀՌՈՄԷԱԿԱՆ ՀԱՅԵՐ

(«[illegible]»)

Ախալքալաքի գաւառի, որ Տփղիսեան նահանգին է վերաբերում, Բարալ, Խուլգումա Կարտիկամ և մասամբ Տուրս գիւղերի բնակիչները տաճկախօս հռոմէական հայ են։ Սրանք 1829-ին գաղթած են Արտահանի գաւառի Դէշօյա հասարակութեան Վէլ գիւղից։

Ինչպէս ծերունիները պատմում են, իրենց նախնիքը կրօնով Հայեր են եղած և զանազան ժամանակներում այլևայլ տեղերից եկած բնակած են այս գիւղը։ Անցեալ դարում Արտահանի բէկը արգիլած է Վէլ և շրջակայ հայախօս գիւղերին հայերէն խօսել և ամէն մի անգամ խօսելիս 50 [illegible] տուգանք է առած։

Այս ժամանակները մի կապուցին (Capucin) քահանայ, որ միանգամայն պարապում էր բժշկութեամբ, գալիս Արտահանի բէկին բժշկում է։ Երբ բէկը լաւ է դառնում, կապուցինը ուզում է հեռանալ, պատճառելով թէ իր պաշտօնն է հռոմէական հաւատք քարոզել։ Իսկ

Дозволено цензурою. Тифлисъ, 11-го Октября 1894 года. Типографія М. Мартиросянца, на Орбел. ул., № 1—5

բէկը որպէս զի քահանային բերնից շատ չհեռացնէ՝ ուղարկում է մօտակայ Վէլ գիւղը՝ քարոզելու։ Վէլցիք, որ քահանայ չէին ունեցել քանի այնտեղ գաղթել էին, կամաց կամաց ընդունում են հռոմէականութիւնը։

Գաղթական ծերունիների ասելով՝ դարուս սկզբում այդ գիւղում բնակւում էին 26 տուն Հռոմէական հայք, և միայն երեք տուն վրացիք։ Սկզբում այս երեք տունը կազմում էր ծիծաղելի գերդաստանը։ Այս երեք տուն վրացիք յունադաւան էին և ունէին իրենց փոքրիկ եկեղեցին։ Հռոմէական հայերը վրացիներին ստիպում էին իրենց կաթուղիկէ կրօնն ընդունելու և երբեք միմեանց աղջիկ չէին տալիս առնում։ Կրօնական վիճաբանութիւններ անպակաս էին իրենց մէջ։

Ծառերը պատմում են, թէ Նաքալաքի գիւղից Սապոգելա անուն մի վրացի՝ շատ խնդրել է Վէլի Կարապետ քէհի (ժառանգը, գիւղի տանուտիրոջ) աղջկայ՝ Հեղինէի ձեռքը, և երբ մերժուել է, ընծաներով համեցրել է Արտահանի բէկին՝ բռնութեամբ խլել աղջիկը և տալ իրեն։ Սրա դէմ յուզուել և բողոքել են Վէլ գիւղի բոլոր Հռոմէական հայերը, և միայն այն ժամանակ են հանգստացել՝ երբ բէկը ստորագրութիւն է առել Սապոգելայից՝ որ չստիպէ Հեղինէին յունադաւանութիւն ընդունելու։ Սակայն հակառակ իւր խոստման սաստիկ ստիպում է կնոջը՝ Հեղինէին՝ որ ընդունի յունադաւանութիւն և երբ սա հաստատ է մնում, կապում է ձեռքն ու ոտքը, վերան մածուն քսում, դնում շների առաջ՝ որ լիզեն, սուրբ Մեռոնը հանեն, որպէս զի յետոյ օրթոդոքս մկրտէ։ Այս որ լսում են Վէլի հայ Հռոմէականները, բողոքում են Արտահանի Ալի-բէկին։ Բէկը 100 ղուռուշ տուգանք է առնում, Սապոգելենց Պետրէի որդի Յովսէփին բանտարկում և խստիւ պատուիրում է նրան՝ ազատ թողնել կնոջը՝ իւր կրօնը՝ դաւանելու։ Այնուհետև կրօնամոլ վրացին ազատ է թողնում Հեղինէին, և սա մինչև ի մահ մնում է Հռոմէական։

1887 Թուին այս կինը, որ 1829 Թուին՝ Կարնոյ գաղթականութեան ժամանակ՝ գաղթել էր Ծալկայի գաւառի Բեխա գիւղը, զգալով մահուան մերձենալը՝ ստիպում է իւր վրացի որդւոց՝ որ տանին իրեն գաւառի Տուրս գիւղը, ուր և մեռնում ու թաղւում է Հռոմէական հայ ծէսով։ Այս գիւղի բոլոր Հռոմէականները յաճախ յիշում են Վ[illegible] անուն Վէլցի հայրենակից մի նահատակ, որ քրիստոնէութեան վերայ վկայել է մարտիրոսական մահուամբ։ Այս ժողովուրդը բացի այն որ հայ տիպն չէ կրում, այլ և իւր աշխատասիրութեամբ ու տոկունութեամբ նրանցից չի տարբերւում։ Սրանց ընտանեկան կեանքը, սովորութիւնները բոլորովին հայկական են։ Հարսանեաց ժամանակ 12 ղուռուշ, ի խորհուրդ 12 առաքելոց, տալիս են աղջկայ մօրը, ինչպէս միւս հայ գիւղացիները։ Թաղման ժամանակ տալիս են «փէտատի հացը», որ է գերեզման փորելու մասնակցութեան ուտելիք։

Ընտանեկան բառերից շատերը դեռ հայկական են. Օրինակ՝ հօքօ (հօրքոյր), սանամէր, սանիկ, խնամի, փեսայ։ Ճակատ, անթեղ, խաչերկաթ, ակիշ, թաթակիշ, մուխքաշ, ծափ, կճուճ, կրծկալ, կապան (փոքքաշ), խոտկուռ, թելաթ. Գոմ, ախոռ, մարագ, բնկալ, կոնտ, կապ, կրկալ, թառ, փակ։ Մատակ, սրփաճ, հարօր, քոթան, խոփ, ձևիչ, մաճ, մաճկալ, սամի։ Խաշիլ, մախոխապուր, լակ։ —Դարձեալ՝ բարև, Աստծու բարին բար՝ երիկուն, գովեցեալ Յիսուս. Կենդանութեն, սաղըլլիք։—Եկեղեցական բոլոր սպասների անուններն ևս հայկական են։

Մարդկանց անունները ևս մեծ մասով հայկական են՝ օրինակ՝ Օսկէհատ, (80 տարեկան մի կին է), Մարգարիտ, Սիբեխն (Սրբուհի), Հռոռմ, (Հռիփսիմէ), Եղսաբէթ, Ծուշան, Վարթուն (86 տարեկան մի կին), Սարգիս, Պապիկ, Գրիգոր, Ներսէս (91 տարեկան ծերունի), Վարդան։

Հայկական ժողովրդական աղօթքներից սրանք գիտեն «Աստուածածին դուն կուս էս», «Լուսացաւ՝ լուսն է բարին» *) և այլն։ Հին սերունդը իրեն ուղղափառ էր անուանում, իսկ նոր սերունդը՝ շնորհիւ ուսուցիչների և քահանաների իրեն «հայ կաթոլիկ» է անուանում և աշխատում է սովորել մայրենի լեզուն։

1886 Թուի աշխարհագրի ժամանակ՝ Նախկին գաւառապետ Սմբաթով վրացի իշխանը եկել էր այս գիւղերը և աշխատել էր սրանց «վրացի» գրել տալ, սակայն միայն մի տուն՝ վախից՝ վրացի էր գրուել, միւսներն ասել էին թէ հայ են։ Ուստի կարծում եմ, որ բոլորովին անհիմն է՝ ոմանց և Զագուրսկիի իւր «Поѣздка въ Ахалцыхскій уѣздъ» աշխատութեան մէջ սրանց «վրացի» կոչելը։

Ե. Լալայեանց։

*) Տես «Ջաւախքի բուրմունք»։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿՈՐԷԱ.—Լրագրները ճափոնական աղբիւրներից հաղորդում են Կորէայի մասին թէ Կորէացիք անսահման երախտագիտական զգացումներ են տածում դէպի ճափոնացիները՝ համարելով նրանց ազատարար, որովհետև ճափոնացոց շնորհիւ այժմ Կորէայում տիրում են կարգ, հանգստութիւն և ապահովութիւն։ Ճափոնացիք Կորէայից ոչ միայն ոչ մի պատերազմական ծախք չեն պահանջում, այլ և կանխիկ դրամ են վճարում այն բոլոր պաշարեղէնի փոխարէն որ Կորէացիք բերում են ճափոնական զօրքերի համար, չնայելով որ այդ ծախքը օրական մէկ ու կէս միլլիոնի է հասնում։

Կորէացիք արդէն կատարելապէս գնահատել են և գնահատում են ու հասկանում քաղաքակրթուած տէրութեան ազդեցութիւնը։ Նրանք ուրախ են որ վերջապէս ազատուել են իրենց կաշառակեր աստիճանաւորներից։ Ճափոնական իշխանութիւնները արդէն այնքան հաւատ են ընծայում Կորէացիներին, որ նրանց ուրախութեամբ զինուորական և ոստիկանական պաշտօններ են տալիս։ Ճափոնական զինուորական ծառայութեան մէջ ընդունուած զինուորների թիւն արդէն հասնում է 10,000-ի։

Եւրոպացի մէսսիօնէր Կօրսի եպիսկոպոսը հաղորդում է երբ թէ ճափոնացիք շատ վատ են վարւում Կորէայի թագաւորի հետ։ Սէուլում, գրում է նա, թագաւորն ուղարկել է եւրոպական դեսպանների ետևից, որոնք մեծ դժուարութեամբ իրաւունք ստացան այցելելու գերեալ թագաւորին։

Դեսպանները գտան թագաւորին, թագուհուն, թագաժառանգին և նախկին նախարարներին զօրաբանակի այն բաժնում, ուր գտնվում են ծառաների վրանները։ Թագաւորը և պալատականները ոչ թէ իրենց զգեստներն ունէին, այլ ծառաների շորերով։ Թագաւորը դեսպաններին ընդունեց մեծ արժանաւորութեամբ և ներողութիւն խնդրեց «որ գերի լինելով չէ կարողանում նրանց մի բաժակ թէյ առաջարկել»։ Միևնոյն ժամանակ խնդրեց որ նրանք բողոքեն իրենց կառավարութեան ճափոնացոց խիստ վարմունքի դէմ։ Տօհատու կիսավայրենի ցեղը ապստամբել է ճափոնացիների դէմ, բայց ոչինչ չէ կարողանում անել, որովհետև զինուած է նետերով և նիզակներով։

ՖՐԱՆՍԻԱ. — Կազիմիր Պերիէէ դէմ հետզհետէ սաստկանում են յարձակումները. ամենակատաղի լրբւով խօսողներն են սօսիալիստները և արմատականները և այն աստիճանի սաստկացել են այդ յարձակումները, որ մինչև անգամ Պերիէէ նախկին հակառակորդներն սկսել են նրան պաշտպանել։ Եթէ Կազիմիր Պերիէն մի որ և է մեծ խնջոյք է տալիս, իսկոյն այդ խնջոյքի մէնիւն տպագրվում է հակառակորդ լրագրների մէջ և դրա հետ միասին երևում են կատաղի յօդուածներ, որոնք հայհոյում են «անզգայի միլլիոնների օրգիաները»։ Եթէ այդ խնջոյքում շամպայն է խմվում, անուանում են «շռայլ արբեցութիւն», եթէ շամպայն չի լինում անուանում են Պերիէին «կծծի, ժլատ»։ Երբ նախագահը տնից դուրս եկաւ կառքով à la Daumont, այդ միևնոյն մամուլը աղաղակ բարձրացրեց ասելով թէ «այդ ծաղր է ժողովրդի աղքատութեան և կարօտութեան վրայ»։ Ամեն օր հայհոյում են Նախագահին նրա «քառասուն միլլիոնանոց» հարստութեան համար և մինչև անգամ պատահական դժբախտութիւնների յանցանքն էլ նրա վրայ են ձգում։ Օրինակ վերջերս Փարիզում մի թշուառ մայր սպանել է իր երեխաներին և ապա իրեն. այդ առիթով Փօրլէի օրգան «Petite République» չարախնդացութեամբ ասում է՝ «այդ լաւ է, այսուհետև Պերիէէ ժողովրդականութիւնն աւելի կընկնի»։ Միևնոյն ժամանակ նախագահին շարունակ մեղադրում են, երբ թէ նա հետևում է «անձնական» քաղաքականութեան։ Մինչև անգամ գաւառներում այդ հոգով բրօշիւրներ են տարածում և միևնոյն ժամանակ իրենք տարածողները հաւատացնում են, թէ դրանց հեղինակը ինքը Պերիէն է կամ նրա կուսակիցները։ Այդ առիթով «Temps» լրագիրը լիազօրութիւն է ստացել Պերիէէ կողմից յայտնել հետևեալը. «Հասարակապետութեան նախագահը հնար չունի խանգարել քաղաքական կուսակցութիւններին ազատ աղաւաղել նրա մտադրութիւնները, փոխել նրա ճառերը իրենց ուզածի պէս. Նա արհամարհում է այդ բոլորը, որովհետև դրանք ստոր են ոչ միայն իր դիրքի արժանաւորութիւնից, այլ և իր անձնական բնաւորութիւնից»։

ԲՈՒԼՂԱՐԻԱ. — Ազգային ժողովի բացումը սպասվում է Հոկտեմբերի 13-ին։ Ամեն կողմերից արդէն ժողովվում են Սօֆիա զանազան կուսակցութեանց պատկանող պատգամաւորներ, որպէս զի խորհրդակցեն և համաձայնութիւն կայացնեն ապագայ գործունէութեան մասին։

Ստոիլովն իր կողմից առանձին ժողով է հրաւիրել նոր ընտրուած պատգամաւորներից. այդ ժողովում Ցանկովի կողմնակիցներից մէկը իր ճառի մէջ դիմելով Ստոիլովին յայտնել է, թէ սահմանադրութեան շահերը պահանջում են որ ազգային ժողովի նիստերն սկսելուց յետոյ նախարարութիւնը հրաժարական տայ և պարլամենտական մեծամասնութեանը թողնի նոր նախարարութիւն կազմել։

«ԱՐՁԱԳԱՆՔԻ»

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ

Հոկտեմբերի 9 ից.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. — Դքսուհի Ալիսա Հեսսէն Մեծ իշխանուհի Ելիսավէտա Ֆէօդօրովնայի հետ գնում է Սինֆերօպօլ, իսկ այնտեղից կառքով Լիվադիա, որտեղ նրա ժամանումն ենթադրվում է երկուշաբթի երեկոյեան ժամը 6-ին։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ.— Բիւլետէն Հոկտեմբերի 9-ից, երեկոյեան 8 ժամ 50 րոպէին.—Վերջին քսան և չորս ժամուան ընթացքում Թագաւոր կայսրը մի քիչ աւելի է քնել, և զարթնել է սովորական ժամանակին. ախորժակը և ինքնազգացումն քիչ աւելի լաւ է. մնացեալ դրութեան մէջ փոփոխութիւն չկայ։

Հոկտեմբերի 10 ից.

ՍԻՄՖԵՐՕՊՕԼ. — Այսօր առաւօտեան տասներորդ ժամին արտակարգ գնացքով այստեղ հասաւ Դքսուհի Ալիսա Հեսսէն։ Կայարանում Նորին Բարձրութեանը դիմաւորեցին զինուորական և վարչական բարձրագոյն ներկայացուցիչները և ժողովրդի մեծ բազմութիւն. քաղաքագլուխը արծաթեայ ափսէի վրայ դքսուհուն մատոյց աղուհաց։ Նահանգապետ Լազարեվի ամուսինը և այլ տիկնայք շքեղ ծաղկեփնջեր մատուցին կենդանի ծաղիկներից։ Սիմֆերօպօլից իշխանուհին զանգակների ղօղանջումի և ուրա՜ աղաղակների ուղեկցութեամբ, կառքով ուղևորուեց Լիվադիա։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. – Բիւլետէն Հոկտեմբերի 10 ից, երեկոյեան ժամ 8 և 16 րոպէին.—Հոկտեմբերի լոյս 10-ը գիշերը Թագաւոր Կայսրը ննջեց ընդհատումներով 5 ժամաչափ։ Նորին Մեծութիւնը զարթնեց սովորական ժամին։ Ախորժակը մի քիչ պակաս է. ուժերը չեն աւելացել։

Հոկտեմբերի 11-ից.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.— Բիւլետէն Հոկտեմբերի 11 ին առաւօտեան 10 ժամի՝ Հոկտեմբերի 10-ին գիշերը ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍՐԸ աւելի լաւ է ննջել, ախորժակը փոքր է, ուժերը և սրտի գործունէութիւնը աւելի լաւ չէ, ոտերի ուռուցքը փոքր ինչ աւելացել է։

Խմբագիր-Հրատարակիչ՝ ԱԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիւրակի օրերից.

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝
Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վերաբուժութեան սիֆիլիսի և վեներական հիւանդութիւնների։
Ն. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի և նեարդային հ.
Դ. Գ. ՐՈՒԴԿՈՎՍԿԻ—10—11 ժամը ներքին, երեխայոց և կանանց հ.
Կին-բժիշկ ՏՈՒՐԲՈՎԻՉ—11—12 ժ. կանանց հ.
Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ.
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—6—7 ժ. Սիֆիլիսի, մէզի ու սեռական օրգանների հ.
Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.
Ն. Ի. ՖՐԱՆՑԻՈՒՍ—7—7½ ականջի, կոկորդի և քթի ու նեարդային հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ.
Ա. Գ. ԴՈՒՐԿՕ քիմի-խոշորացուցական հետազօտութիւն է անում մէզի, խխի, արեան, կաթի և այլն։
Վճար 50 կ. Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցումը ընդունւում են և ԳԻՇԵՐՕԹԻԿ ՀԻՒԱՆԴՆԵՐ.
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Ն[illegible]եան։

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

(Միխրանեան փ., տ. Կուզանեանի, № 15. հիմնել են Թիֆլիզի քաղաքացիները երթեւեկ հիւանդների համար 1866 թ. ապրիլի 4-ի յիշատակին).
Հիւանդների ընդունելութիւն ամեն օր, բացի կիրակի օրերից, ձմեռն առաւօտեան ժամը 9—1, ամառը (յունիսի, յուլիսի և օգոստոսին) առաւ. ժամը 8—12.
Վ. Մ. Ա[illegible] — ներքին, երեխանց և ջղային հիւ. ժամը 10½—12 ամեն. օր.
Կ. Ա. Ղ[illegible]—ներքին և երեխանց, ժ. 10½—12 ամեն օր.
Գ. Գ. Գ[illegible]—խիրուրգ. և մէզի անդ. ժ. 11—12 ամեն օր.
Կին-բժ. Մ. Ա. Խ[illegible]—կանանց ժ. 9—11 ամեն օր.
Ն. Գ. Կ[illegible] — ներքին և երեխանց, ժամը 12—1 ամեն օր.
Ս. Ն. Լեւին—խիրուրգ. և մէզի անդ. ժ. 11—12 ամեն օր.
Մ. Ա. Մ[illegible]—ներքին և վեներական, ժ. 12—1 (երկ. չոր. և շաբ. օր.).
Ա. Գ. Մ[illegible]—ականջի, կոկորդի և քթի, ժ. 9—10 ամեն օր, բացի հինգշաբթի օրուանից.
Կին-բժ. Լ. Ե. Մ[illegible]—կանանց, ժամը 11—12 ամեն օր.
Ե. Ա. Ռ[illegible]—ներքին, երեխանց և ատամի, ժամը 9—10 ամեն օր.
Մ. Ա. Ռ[illegible]—ներքին և ջղային, ժամը 11—12 ամեն օր.
Գ. Ն. Ս[illegible]—ներքին, մէզի անդ. և վեներական, ժամը 11—12 ամեն օր.
Գ. Ա. Թարխանեան — ներքին և խիրուրգ., ժ. 11—12 ամեն օր.
Կին-բժ. Ս. Ա. Ճ[illegible]—աչքի և կանանց, ժամը 11—12 ամեն օր.
Ատամն. բոյժ Ա. Օ. Օ[illegible]—ատամ[illegible] ժամը 10—11 ամեն օր.
Կոնսուլտացիոնը երեքշաբթի և ուրբաթ օրերը ժ. 12—1. Ծաղկի պատուաստումն—չորեքշաբթի և շաբաթ ժամը 9—1.

ՀԱՒԼԱԲԱՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ
(Կախեթինսկայա փ., տ. Տէրտէրեան[illegible])
Մ. Ա. [illegible]—ժամը 11[illegible] ամեն օր.
Կին-բժ. Մ. Ա. Խ[illegible]—կանանց, 11—12 երեքշաբթի և ուրբաթ օր[illegible]

ԽԱՐՓՈՒԽԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ
(Բաննիա փողոց, տ. Էնֆիաճեան[illegible])
Գ. Բ. Տէր-[illegible]—ժամը 11[illegible] ամեն օր.
Կին-բժ. Մ. Ա. Խ[illegible]—կանանց, 11—1 երեքշաբթի և ուրբաթ օրեր.
Դեղատուն.—Չքաւոր անձերին բժշկական խորհուրդ և դեղեր տրւում ձրի։
Քաղաքային բուժարանի կառավարիչ՝
Գ. ՍՏԵՓԱՆԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵ[illegible]

Մամուլի տակից լոյս տեսաւ
և
ՈՒՂԱՐԿՈՒԵՑ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ[illegible]
„ԹԱՏՐՈՆ“
ԳՐԱԿԱՆ ԵՒ ԹԱՏԵՐԱԿԱ[illegible]
ՀԱՆԴԷՍԻ
II-ՐԴ ԳԻՐՔԸ
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ
1) ՅՈՒՑԱԿ ՊԻԷՍՆԵՐԻ, 2) ՄԱՐ[illegible] ՍՏԻՒԱՐՏ, ողբերգ. 5 գործող. հեղ. Շիլլեր, թրգմ. Գ. Բարխուդարեանի, 3) ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ԷԹԻՔԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ, Ճաղարբէգեան, 4) ԴԱՆԴՈԼՕ, Լեգուվէ[illegible] Ս. Թանդեան, 5) ՎՐԱՑ ԹԱՏՐՈՆԻ ՄԱՍԻՆ[illegible] Վ. Գունիա։ 6) ՖԻՇԵՐ, բան. S. H. 7) ԿԻՆՈՆՆԵՐ ԴԵՐԱՍԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ, Վ. Գ[illegible] Թէլի, Ս. Կանայեան, 8) ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ, Վր. Փափազեան, 9) ՄԱՍԿԱՆԻՑ և ԶՈՒԴԵՐՄԱՆ. Թատրոնասէր, 10) ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ 1893—94 Թատերաշրջանի, Թիֆլիսում, 11) ԸՆՏԱՆԵԿԱՆ ՓՈԹՈՐԻԿ, վոդ. փոխ. Արգ. Յովհաննիսեանի։
Շարունակւում է 1894 Թուականի բաժանորդագրութիւնը։ Բացուած է 1895 Թուականի բաժանորդագրութիւնը։
Տարեկան բաժանորդագինն է 3 ռ. ուսուցիչների համար 3 ռ. 30 կ.
Թատրոնի առանձին հատորները վաճառւում են „Կենդրոնական գրավաճառանոցում“
Հրատարակիչ՝ ԱՂԷՔ. ԹԱՐԽԱՆԵԱՆ
Հասցէն՝ Тифлисъ, Александру Тарханянъ. (5—3)

ԲԺՇԿԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴՕԿՏՕՐ
ՍԱՄՈՒԷԼ ՊՕՂՈՍԵԱՆ
ՇԱՀ-ՊԱՐՕՆԵԱՆ
Ընդունելութիւն ծննդականների և կանանց հիւանդութիւնների։ Սօլօլակ, Նագորնայա և Ռտիշչևսկայա փողոցների անկիւնը, № 13 տուն Շամխորեանի (3—1)

ՀԱՇՈՒԵԿՇԻՌ

ԹԻՖԼԻԶԻ ՓՈԽԱԴԱՐՁ ՎԱՐԿԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ց1-ն Հոկտեմբերի 1894 թ.

ՊԱՀԱՆՋՔ

I Դրամարկղ		86,705	02
II Ընթացիկ հաշիւ Պետ. բանկ. բ.		2,131	58
III Զեղչումն (Disconto) մուրհակաց երկու ստորագրութեամբ		2,779,048	42
IV Զեղճ. տոկ. թղ. կտրօնների և այլն		12,240	26
V Զեղծումն սօլօ—մուրհակների գրաւականով			
ա) պետութեան ոչ-ապահովեալ արժեթղթերի	230,437—		
բ) ապրանքների	20,550—		
գ) անշարժ կալուածքների	169,810—	420,297	—
VI Փոխատուութիւն գրաւականով			
ա) Պետութեան ապահ. տոկ. թղ.	458,305—		
բ) « ոչ » « »	16,150—		
գ) ապրանքների	— —		
դ) Ոսկւոյ և արծաթի		474,445	—
VII Առանձնական ընթացիկ հաշիւներ		1,223,245	72
VIII Պահեստի դրամագլխին պատկ. տոկոս. թղթեր		143,541	55
IX Ընկերութեան պատկանեալ արժեթղթեր		50,634	57
X Թղթակիցներ՝			
ա) Նոցա հաշիւը (Loro)	992,817 79		
Ընկերութեան հաշիւը (Nostro)	37,786,294 48	28,779,112	27
XI Բողոքուած մուրհակներ		15,089	14
XII Պայմանաժամ. անցուցած փոխատու.		— —	—
XIII Մուրհակի և դրոշմակիր թղթեր.		3,224	20
XIV Ընթացիկ ծախսեր		41,222	60
XV Ցետ ստացուելիք ծախսեր		9,688	04
XVI Կահ կարասիք և սկզբն. ծախսեր		3,235	97
XVII Ընկերութեան վրայ մնացած անշարժ կայք.		27,809	64
XVIII Փոխանցիկ գումարներ		38,646	82
Ր. Ա.		34,110,827	80

ՊԱՐՏՔ

I Ապահովութեան դրամագլուխ		957,240	—
II Հիմնական դրամագլուխ		144,273	[illegible]
III Պահեստի դրամագլուխ		9,783	[illegible]
IV Օժանդակութեան դրամագլուխ ծառայողների համար			
V Դրամական աւանդներ՝			
ա) Ընթացիկ հաշուով հասարակ	454,352 64		
բ) « » պայմանաւոր	299,096 73		
2) Պայմանաժամով			
ա) Ընկերութեան անդամներից	201,838 —		
բ) Օտար անձինքներից	1,488,437 92		
3) ցպահանջ			
ա. Ընկերութեան անդամներից	5,502 80		
օտար անձինքներից	452,070 83	2 901,298	[illegible]
VI Պետ. բանկ. զեղչ. մուրհակներ		378,696	[illegible]
VII Մասնաւոր ընթացիկ հաշիւ պետ. բան. մուրհակներով		114,083	[illegible]
արժեթղթերով		150,000	—
VIII Ընկերութ. փոխադրութեամբ ստացած հասանելի գումարներ		394,443	54
IX Թղթակիցներ			
ա) Նոցա հաշիւը (Loro)	772,369 82		
բ) Ընկերութեան հաշիւը (Nostro)	27,857,990 65	28,630,360	47
X Չը վճարուած դիվիդենդ		20,565	23
XI Չը վճարուած տոկոսներ աւանդների և ընթաց. հաշիւների		69,819	41
XII Փոխանցիկ գումարներ		36,560	66
XIII Հանումներ ըստ 16-րդ յօդ. տրամադր.		25,594	60
XIV Ստացուած տոկոսներ և յանձնարարականներ		276,626	64
XV 5% պետական հարկ դրամագլխներից		1,481	51
XVI Զուտ արդիւնք 1893		— —	—
Ր. Ա.		34,110,827	80

Дозволено цензурою Тифлисъ, 11-го Октября, 1894 года.
Տպարան Ե. Մարտիրոսեանցի
Типографія И. Мартиросіанца. на Орбел. ул., № 1—2